



Funded by
the European Union

EU4Climate
Better Climate Policies for Eastern Partner Countries



ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ (ՀԸԳՀ) ԿԻՐԱՐԿՄԱՆ
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ, ԲԱՑԵՐԻ ԵՎ
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Իրավական հարցերով անկախ փորձագետ Նարինե Սուլումոնյան

Երևան, 2023

Բովանդակություն

Նախաբան	3
Մաս 1. Ընդհանուր բնույթի դրույթներ	4
1.1 ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզից բխող միջոցառումների կատարման ընդհանուր վիճակը.....	4
Մաս 2. Ճանապարհային քարտեզով ամրագրված միջոցառումների կատարման առաջընթացը	7
Միջոցառում 1. (120)	7
Միջոցառում 2. (121) -	19
Միջոցառում 3. (122)	23
Միջոցառում 4 (123)	28
Միջոցառում 5. (124)	31
Միջոցառում 6. (125)	33
Միջոցառում 7. (126) -	37
Միջոցառում 8. (127)	39
Միջոցառում 9. (128)	40
Միջոցառում 10. (129)	42
Միջոցառում 11. (130)	42
Միջոցառում 12. (131)	43
Մաս 3. Առաջարկություններ ճանապարհային քարտեզի կլիմայի փոփոխության վերաբերյալ միջոցառումների կատարման առնչությամբ	45
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	49

Նախաբան

Սույն հետազոտությունն ուղղված է ՀՀ և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզով Կլիմայի փոփոխության վերաբերյալ նախատեսված ԵՄ հրահանգների/ կանոնակարգերի՝ ՀՀ օրենսդրության մեջ տեղայնացման գործընթացի գնահատմանը:

2017-ի նոյեմբերի 24-ին ստորագրվեց ՀՀ և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ): ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N666-Լ որոշմամբ հաստատվեց ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզը (ՃԲ), որն, ի թիվս այլոց ներառում է գործողություններ կապված կլիմայի փոփոխության հետ: Մասնավորապես, ճանապարհային քարտեզի 120-131 միջոցառումները վերաբերում են կլիմայի փոփոխությանը (12 գործողություններ)՝ կապված առավելապես Փարիզյան համաձայնագրի իրագործման օրենսդրությանը, օգոն քայքայող նյութերի և ֆտորացված ջերմոցային գազերի հետ կապված օրենսդրության մշակման հետ: Մոտարկվելու են ԵՄ հրահանգներ ու կանոնակարգեր, որոնք վերաբերում են ջերմոցային գազերի արտանետումների քվոտաների վաճառքի համակարգի սահմանմանը, ջերմոցային գազերի արտանետումների հաշվետվայնությանն ու դիտարկմանը, օգոնային շերտը քայքայող նյութերին և այլն:

Հետազոտության նպատակն է բացահայտել ճանապարհային քարտեզով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքն ու բացերը: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են ԿՓ վերաբերյալ ԵՄ հրահանգներն ու կանոնակարգերը, ԵՄ եկրների, ինչպես նաև ԵՄ շրջանակներում համագործակցող երկրների իրավակարգավորումները, ԵՄ հրահանգների կիրառման ուղեցույցները, ներպետական օրենսդրությունը և այլն: Ճանապարհային քարտեզով ամրագրված միջոցառումների կատարման ընթացքի գնահատման հիման վրա կատարվել են քարտեզի վերանայման առաջարկություններ:

Հետազոտությունը բաղկացած է չորս մասից, որոնք վերաբերում են ՀԸԳՀ ՃԲ-ով նախատեսված միջոցառումների կատարման գնահատման մեթոդաբանությանը, Փարիզյան համաձայնագրից բխող պարտավորությունների կատարման գործողությունների ծրագրին, ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման ազգային համակարգին, ջերմոցային գազերի դիտանցման, հաշվետվություններ ներկայացման, ստուգման և կատարման համակարգերի ու հանրային քննարկումների ընթացակարգերի, կլիմայի փոփոխության ինստիտուցիոնալ ասպեկտներին և օգոնային շերտը քայքայող նյութերի փոխարինմանն ուղղված միջոցառումներին:

Մաս 1. Ընդհանուր բնույթի դրույթներ

1.1 ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզից բխող միջոցառումների կատարման ընդհանուր վիճակը

ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզով սահմանված միջոցառումների տեղայնացման գործընթացն ամբողջությամբ նախատեսված է ավարտել մինչև 2026 թվականի սկիզբը, ընդ որում՝ մասամբ մինչև 2024 թվականի սկիզբը և մեկ միջոցառում (130-րդ միջոցառում) արդեն կատարված է: Նախատեսված միջոցառումների կատարման համար մոտարկման ենթակա են ԵՄ հետևյալ ակտերը.

ԵՀ Հրահանգ	Կանոնակարգեր
Միության տարածքում ջերմոցային գազերի արտանետումների քվոտաների վաճառքի համակարգը սահմանող և Խորհրդի թիվ 96/61/ԵՀ հրահանգը փոփոխող Եվրոպական խորհրդարանի և խորհրդի թիվ 2003/87/ԵՀ հրահանգ /Հավելված I և II	2003/87/ԵՀ հրահանգին համապատասխան ջերմոցային գազերի դիտարկման և հաշվետվայնության վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի և խորհրդի թիվ 601/2012/ԵՄ
	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003/87/ԵՀ հրահանգի համաձայն ջերմոցային գազերի արտանետումների մասին հաշվետվությունների և տոննա-կիլոմետրի մասին հաշվետվությունների վերահաստատման և վերահաստատողների հավատարմագրման մասին Հանձնաժողովի թիվ 600/2012 կանոնակարգ
	Ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման և դրանց վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու, ինչպես նաև կլիմայի փոփոխությանն առնչվող այլ տեղեկություններ ներպետական և Միության մակարդակներով ներկայացնելու մեխանիզմի և թիվ 280/2004/ԵՀ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 525/2013 կանոնակարգ
	Ֆտոր պարունակող ջերմոցային գազերի և թիվ 842/2006 (ԵՀ) կանոնակարգն ուժը կորցրած ճանաչելու մասին Եվրոպական գնապառլամենտի և խորհրդի թիվ 517/2014 17/2014 կանոնակարգ
	Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 1005/2009 կանոնակարգ

Վերոհիշյալ ակտերի տեղայնացման նպատակով ՃԲ-ով նախատեսվել է 12 միջոցառում, որոնց կատարման համար հիմնական համակարգող մարմինը ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունն է: Միջոցառումներն առավելապես ուղղված են նշված ոլորտներում օրենսդրության ընդունման, ենթաօրենսդրական ակտերի ընդունման /վերանայման, տարբեր համակարգերի ստեղծման, քաղաքականությունների մշակման, ջերմոցային գազերի ազգային կադաստրի և ազգային զեկույցներ ներկայացնելու համակարգերի

բարելավման, տեխնոլոգիաների զարգացման, հաշվետվությունների ներկայացման համակարգի ստեղծման, տեսչական ստուգումների ընթացակարգերի սահմանման և այլ գործողությունների իրականացմանը:

Ի տարբերություն ՀՀԳՀ ճՔ այլ ոլորտների միջոցառումների արդյունքների, կլիմայի փոփոխությանը վերաբերող միջոցառումներում կոնկրետացված չեն ակնկալվող արդյունքները, մասնավորապես նշված չեն թե ինչ կոնկրետ օրենքներ կամ ենթաօրենսդրական ակտեր կամ գործողություններ պետք է իրականացվեն: Այդ միջոցառումների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ճՔ-ում տեղ գտած ԵՄ ակտերը մի դեպքում ամբողջությամբ են մոտարկման ենթակա, մյուս դեպքում՝ դրանց միայն որոշ հոդվածներ: Օրինակ, 2003/87/ԵՀ հրահանգը նախատեսված է մոտարկման երկու միջոցառումներով՝ 120 և 122-րդ, ընդ որում 120-րդ միջոցառման մեջ մոտարկման ենթակա են նշված հրահանգի միայն 14-րդ, 15-րդ, 16(1)-րդ և 17-րդ հոդվածները, իսկ 122-րդ միջոցառմամբ այն ենթակա է մոտարկման ամբողջությամբ՝ 600/2012 կանոնակարգի համակցությամբ, մինչդեռ ակնկալվող արդյունքն ավելի կանոնակարգահեն է:

ՃՔ-ում ներառված կանոնակարգերի մի մասը ընդհանուր են հիշատակված (601/2012/ԵՄ, 600/2012, 525/2013, 517/2014, 1005/2009), մյուս կանոնակարգերը՝ կոնկրետ հոդվածներով (126 միջոցառման մեջ՝ 517/2014, 127-ում՝ 517/2014, 128-ում՝ 517/2014, 129-ում՝ 517/2014): Ինչպես երևում է հրահանգի/կանոնակարգերի և դրանց առանձին հոդվածների՝ ՃՔ տարբեր միջոցառումներում ընդհանրական ընդգրկվածության ու կրկնության աստիճանից, մոտարկման գնահատումը չի կարող բացարձակ ճշգրիտ լինել այս պահի դրությամբ:

Ելնելով այն հանգամանքից, որ 12 միջոցառումների կատարման համար նախատեսված են երեք ժամանակագրական փուլեր և միայն մեկ փուլն է ավարտված, ապա օբյեկտիվորեն անհրաժեշտ է նշել, որ սահմանված միջոցառումներից մի մասն է կատարվել ամբողջությամբ, մյուս մասը՝ մասնակի, իսկ որոշ միջոցառումներ գտնվում են մեկնարկային քննարկումների փուլում: Հարկ է արձանագրել, որ հետազոտության իրականացման պահին փոփոխություններ և լրացումներ կատարվել են գործող «Մթնոլորտային օդի պահպանության մասին» և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» ՀՀ օրենքներում, հարկային օրենսգրքում, ինչպես նաև մշակվել է «Կլիմայի մասին» օրենքի հայեցակարգը: «Կլիմայի մասին» օրենքի ընդունմամբ հնարավոր կլինի ապահովել ԵՄ հրահանգից/կանոնակարգերից բխող մի շարք պահանջների մոտարկումը: Միաժամանակ, մշակվել են ենթաօրենսդրական ակտերի նախագծեր՝ կապված ջերմոցային գազերի գույքագրման կարգի, կարգավորվող նյութերի ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին հաշվետվության հաշվառման կարգի, օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման ընդհանուր չափաքանակների (քվոտաները) և հիդրոֆտորածխածինների առաքման թույլտվության էլեկտրոնային եղանակով տրամադրման կարգի սահմանման, ինչպես նաև հիդրոֆտորածխածինների ցանկի հաստատման հետ:

1.2. Ճանապարհային քարտեզով նախատեսված միջոցառումների կատարման գնահատմանն հետազոտության առարկան և մեթոդաբանությունը

ՀՀ և ԵՄ միջև ՀԸԳՀ ստորագրմամբ, կլիմայի փոփոխության վերաբերյալ գործընթացը որակապես նոր փուլ մտավ, քանզի ԵՄ հրահանգների/կանոնակարգերի մոտարկմամբ պահանջվում է ՀՀ ներպետական օրենսդրության աստիճանական և կոնցետրուալ նոր լուծումներով համապատասխանեցման գործընթաց:

Մոտարկման գործընթացի գնահատման նպատակով ուսումնասիրման են ենթարկվել մոտարկման ենթակա կլիմայի փոփոխությանը վերաբերող ԵՄ հրահանգներն ու կանոնակարգերը, ԵՄ դիրեկտիվների մոտարկման վերաբերյալ ընդհանուր բնույթի ռազմավարություններն ու ուղեցույցները, տարբեր երկրների¹ ԵՄ հրահանգների տեղայնացման ազգային ռազմավարությունները, ինչպես նաև ճանապարհային քարտեզը, ներպետական օրենսդրությունը, ՀՀ-ում ԵՄ օրենսդրության մոտարկման վիճակի գնահատման վերաբերյալ միջազգային ու տեղական փորձագետների կողմից կատարված ուսումնասիրությունները²: Հատուկ ուշադրության է արժանացել տարբեր պետությունների մոտարկման գործընթացներում որդեգրված մոտեցումների քննարկման այն համակարգը, որն առավելապես հանգում է մոտարկման գործընթացի դիտարկման երկփուլ գնահատմանը՝ ելնելով ԵՄ հրահանգների ամբողջական տեղայնացման ու մասնակի տեղայնացման սկզբունքներից³:

Այնուհանդերձ սույն հետազոտության հիմնական նպատակը կատարված ուսումնասիրության ընթացքում վեր հանված բացերի լրացման ուղղությամբ համապատասխան առաջարկությունների ներկայացումն է, որոնք կնպաստեն ՀԸԳՀ ճթ վերանայմանն ու վերջինիս առավել արդյունավետ կատարման ապահովմանը:

ՀԸԳՀ ճթ միջոցառումների կատարման գնահատման նպատակով հետազոտությունը ներառում է հարցազրույցներ փորձագետների և պետական գերատեսչությունների

¹Մոնտենեգրոյի, Սլովակիայի, Լեհաստանի, Վրաստանի կլիմայի փոփոխության վերաբերյալ ԵՄ դիրեկտիվների տեղայնացման ազգային ռազմավարությունները: https://climate-laws.org/search?fbclid=IwAR07YQ8J6HDNEk-YeEdD0U_2xohqVrMmzPTPoC3FPI3IEjjVZlrzbG0fwl, <https://www.batory.org.pl/doc/k3.pdf>

file:///C:/Users/user/Downloads/Compliance%20Check%20and%20Gap%20Analysis%20on%20EU%20Acquis.pdf

² Gap analysis and a Roadmap for further legal approximation with the EU climate action acquis pursuant to the Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA) between Republic of Armenia and the European Union. Svetlana Zhekova, Final Report, April 2021.

Ռալֆ Յուրեվիչ: Օդի վերաբերյալ միջոցառումների պլան, Թափոնների վերաբերյալ միջոցառումների պլան:

Հայաստանում ջերմոցային գազերի արտանետումների ազգային կադաստրի գործառնական համակարգի և Չափումների, հաշվետվայնության և հավաստագրման համակարգի մշակման ճանապարհային քարտեզ: Ամփոփիչ զեկույց: Մարիա Պուրցներ, 2022 թ. դեկտեմբեր:

³ Միջոցառումների չկատարման դեպքում պետության կողմից ներկայացվում են պատճառաբանված հիմնավորումներ/մեկնաբանություններ:

ներկայացուցիչների հետ: Բացի այդ, հետազոտությունը նախապատրաստվել է՝ հիմք ընդունելով գործող նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև ակտերի նախագծերը:

Կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- **Փաստաթղթերի վերլուծության մեթոդ:** Վերլուծվել են ՀՀ կողմից վավերացված միջազգային իրավական ակտերը, ԵՄ հրահանգները/կանոնակարգերը, վերջիններիս կիրառման ուղեցույցները, ԵՄ արդարադատության դատարանի ակտերը, ՀՀ օրենսդրությունը, ՀԸԳՀ ճանապարհային քարտեզով ամրագրված միջոցառումների կատարման կապակցությամբ միջազգային փորձագետների կողմից պատրաստված վերլուծությունները:
- **Փորձագիտական հարցման մեթոդ:** Իրականացվել են հարցազրույցներ պետական հաստատությունների ներկայացուցիչների⁴ և ոլորտի մասնագետների հետ⁵:

Այսպիսով, տեղեկությունների զգալի մասը հավաքվել է համակարգող մարմնին ուղղված հարցումների, միջազգային ու տեղական փորձագետների կողմից կատարված հետազոտությունների/հարցազրույցների և հրապարակային տեղեկատվության աղբյուրների միջոցով:

Մաս 2. Ճանապարհային քարտեզով ամրագրված միջոցառումների կատարման առաջընթացը

Միջոցառում 1. (120) - Հիմնականում կապարված



ՀՀ պարտավորությունը - մինչև 2026 թ. առաջին եռամսյակը մոտարկել ազգային օրենսդրությունն Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003 թ. հոկտեմբերի 13-ի 2003/87/ԵՀ հրահանգին և 601/2012 ԵՄ կանոնակարգին:

Այս միջոցառմամբ ՀՀ-ն պարտավորվել է մշակել Փարիզյան համաձայնագրից բխող պարտավորությունների կատարման գործողությունների ծրագիրը, ստեղծել համապատասխան կառուցվածքների և ջերմոցային գազերի նույնականացման համակարգ, սահմանել 2003/87/ԵՀ հրահանգի I և II հավելվածներով ջերմոցային գազերի (ներառյալ ավիացիոն արտանետումների) դիտանցման, հաշվետվություններ ներկայացնելու, ստուգման և կատարման համակարգերի և հանրային քննարկումների ընթացակարգեր:

ՀՀ-ում ընդունված իրավական ակտերի՝ ԵՄ դիրեկտիվներին համապատասխանության հարցը նախևառաջ պետք է դիտարկել այն տեսանկյունից, թե որքանով է ճիշտ ընկալվել դիրեկտիվի նպատակը և նույնությամբ մոտարկվել: 2003/87/ԵՀ հրահանգի ընդհանրական նպատակն է ջերմոցային գազերի արտանետումների համար քվոտաների առևտրի սխեմայի սահմանումը՝ տնտեսապես արդյունավետ և ծախսարդյունավետ եղանակներով՝ ջերմոցային

⁴Ճանապարհային քարտեզից բխող միջոցառումների կատարմանն ուղղված ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացված գործողությունների կատարման վերաբերյալ վերջինիս ներկայացվել է հարցաշար, որի արդյունքներն արտացոլված են հետազոտության մեջ:

⁵ Inter alia, ՄԱԶԾ ծրագրի և Համաշխարհային բանկի կլիմայի հարցերով փորձագետների հետ:

գազերի արտանետումների կրճատմանը նպաստելու նպատակով: ՀՀ-ը պարտավորվել է սույն միջոցառման ներքո մոտարկել նշված հրահանգի 14-րդ, 15-րդ, 16(1) և 17-րդ հոդվածները, որոնք առավելապես սահմանում են արտանետումների մոնիթորինգի ու դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման, ստուգման և հավատարմագրման, պատժամիջոցների, տեղեկատվության մատչելիության իրավունքի հետ կապված դրույթներ: ԵՄ 2003/87 դիրեկտիվի մոտարկման նպատակով ԵՄ շրջանակներում համագործակցող պետությունների ու ՀՀ կողմից ընդունված կամ նախագծված իրավական ակտերը ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. 2003/87 հրահանգի մոտարկման միջազգային պրակտիկա

Երկիր	Ընդունված նորմատիվ իրավական ակտ
Լեհաստան	- Ջերմոցային գազերի և այլ նյութերի արտանետումների կառավարման համակարգի մասին նորմատիվ իրավական ակտ⁶ - Ջերմոցային գազերի արտանետումների քվոտաների առևտրի համակարգի մասին իրավական ակտերը⁷
Մեծ Բրիտանիա	- Ջերմոցային գազերի արտանետումների առևտրի սխեմա - Ջերմոցային գազերի արտանետումների առևտրի սխեմայի և արտանետումների ազգային գույքագրման համակարգի վերաբերյալ կանոնակարգեր⁸,
Էստոնիա	- Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք - Մթնոլորտային օդ CO2 արտանետումների որոշման մեթոդաբանություն - Ստացիոնար աղբյուրներից ջերմոցային գազերի արտանետումների ընդհանուր թույլտվությունները և դրանց բաշխման պլան
Խորվաթիա	- Կլիմայի փոփոխության և Օզոնի շերտի պաշտպանության մասին ակտ - Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք - Շրջակա միջավայրի պաշտպանության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին Խորվաթիայի օրենք
Լատվիա	- Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք - Շրջակա միջավայրի պաշտպանության մասին օրենք - Աղտոտման մասին օրենք - Բնապահպանական հարկի և բնական պաշարների հարկի օրենքում փոփոխություններ - ՋԳ արտանետումների թույլտվությունների համար դիմելու կարգ⁹

⁶ Act of 17 July 2009 on the system of management of emissions of greenhouse gases and other substances, uniform text OJ 2017, item 286, as amended. Act of 12 June 2015 on the system of trading of greenhouse gases emissions quotas, uniform text OJ 2017, item 568, as amended. 41 Directive 2009/28/WE of the European Parliament and of the Council of 23 April

⁷ Act of 12 June 2015 on the system of trading of greenhouse gases emissions quotas, uniform text OJ 2017, item 568, as amended.

⁸ <https://eur-lex.europa.eu/legal-content/en/NIM/?uri=CELEX:32003L0087>

⁹ <https://eur-lex.europa.eu/legal-content/en/NIM/?uri=CELEX:32003L0087>

ԵՄ շրջանակներում երկրների կողմից մոտարկման գործընթացներին նաև անդրադարձ է կատարվել ԵՄ արդարադատության եվրոպական դատական պրակտիկայում¹⁰։ Հայաստանի Հանրապետությունում 2003/87 հրահանգից բխող մոտարկման ենթակա իրավական ակտերի շրջանակը ստորև ներկայացվում է I) ընդունված իրավական ակտեր և II) մշակված իրավական ակտեր տարբերակմամբ։

I. Ընդունված իրավական ակտեր.

1. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների (07.12.2022թ.) նպատակը, ի թիվս այլոց, նաև կլիմայի փոփոխության, օդի որակի պահպանության և ջերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ ԵՄ օրենսդրության հետ մոտարկումն է։ Օրենքում ամրագրվել են ջերմոցային գազերի հասկացությունը, կառավարության լիազորությունները՝ ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգի հաստատման հետ կապված, լիազոր մարմնի լիազորությունները՝ ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման հետ կապված, մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի և ջերմոցային գազերի անշարժ ու շարժական աղբյուրներ ունեցող ֆիզիկական (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող) և իրավաբանական անձանց պարտականությունները։ Ինչպես նշվեց, ամրագրվել է «ջերմոցային գազեր» հասկացությունը, որի համաձայն ջերմոցային գազեր են համարվում մթնոլորտի ինչպես բնական, այնպես էլ արհեստական ծագում ունեցող գազային բաղադրիչները, որոնք կլանում և վերարտացում են ինֆրակարմիր ճառագայթումը։ Ջերմոցային գազերի եզրույթի ամրագրումը կարևոր է արտանետումների մոնիթորինգի ու դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման գործընթացի ճշգրիտ կազմակերպման համար։ ԵՄ 2003/87 դիրեկտիվում տրված սահմանումների համաձայն, «ջերմոցային գազեր» նշանակում է Հավելված II-ում թվարկված գազերը¹¹ և մթնոլորտային այլ բնական կամ մարդածին գազանման բաղադրիչներ, որոնք կլանում և այնուհետև արտանետում են ինֆրակարմիր ճառագայթումը։ Գործող օրենքի համապատասխան իրավակարգավորումն անհրաժեշտ է լիովին համապատասխանեցնել ԵՄ դիրեկտիվի հետ՝ «արհեստական ծագում ունեցող գազային բաղադրիչ» եզրը փոխարինելով «մարդածին ծագում ունեցող գազային բաղադրիչ» եզրույթով։ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի հասկացությամբ ապարատում առկա չէ «ջերմոցային գազերի արտանետումների թույլտվություն» հասկացությունը, քանի որ դրա պրակտիկ անհրաժեշտությունը առկա չէ։ Այնուամենայնիվ, ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ-ն իր օրենսդրությունը մոտարկում է եվրոպական օրենսդրությանը, ապա անհրաժեշտ է առաջնորդվել համապատասխանեցման պարտավորության տրամաբանությամբ։

¹⁰ ԳԴՀ ընդդեմ Նորդգուբերի ԱԳ, Արսելորմիտալ Ռոդենջ Շիֆլենգը ընդդեմ Լյուքսեմբուրգի, Էստոնիայի Հանրապետություն ընդդեմ Եվրոպական համայնքների հանձնաժողովի գործեր։ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX%3A62014CJ0148>; <http://climatecasechart.com/non-us-case/arcelormittal-rodange-et-schiffange-sa-v-state-of-the-grand-duchy-of-luxembourg/>; <http://climatecasechart.com/non-us-case/republic-of-estonia-v-commission-of-the-european-communities/>

¹¹Ածխածնի երկօքսիդ (CO₂), մեթան (CH₄), ազոտի օքսիդ (N₂O), հիդրոֆտորածխածիններ (HFCs), պերֆտորածխածիններ (PFCs), ծծմբի հեքսաֆտորիդ (SF₆)։

Ջերմոցային գազերի արտանետումների թույլտվությունը քննարկվող դիրեկտիվի շրջանակներում տրամադրվում է միայն Հավելված II-ում նշված վեց գազերի համար՝ դիրեկտիվով սահմանված կարգով: Հաշվի առնելով, սահմանումների առկայության կարևորությունն օրենքում, անհրաժեշտ է «ջերմոցային գազերի արտանետումների թույլտվություն» հասկացությունը ևս ամրագրել օրենքում՝ համապատասխանեցնելով ԵՄ 2003/87 դիրեկտիվի կարգավորումների հետ: Մասնավորապես, դիրեկտիվի 3-րդ հոդվածում ամրագրված է «ջերմոցային գազերի արտանետումների թույլտվություն» սահմանումը, որը տրվում է նույն դիրեկտիվի 5-րդ և 6-րդ հոդվածների համաձայն, որոնք ընդգրկում են ջերմոցային գազերի արտանետումների թույլտվություն ստանալու հայտերը և ջերմոցային գազերի արտանետումների թույլտվություններ տալու պայմաններն ու այդ թույլտվությունների բովանդակությունը: Այսինքն, այնպիսի թույլտվություն է, որը տրվում է իրավասու մարմնի կողմից և որով շնորհվում է ամբողջ կառուցվածքից կամ կառուցվածքի մի հատվածից ջերմոցային գազեր արտանետելու իրավունքը, եթե համոզված է, որ կառուցվածքի շահագործողն ունակ է մոնիթորինգի ենթարկելու արտազատված արտանետումներն ու հաշվետվություն ներկայացնելու այդ արտանետումների վերաբերյալ:

Վերջինս կարևորվում է նաև ածխածնի հարկի սահմանման և գանձման պայմաններում: Ընդ որում, կախված այն հանգամանքից, թե ածխածնի հարկը կդիտարկվի որպես շրջակա միջավայրն աղտոտող արտանետվող նյութերի ցանկում, թե կձևակերպվի որպես բնապահպանական հարկ, անհրաժեշտություն է առաջանալու ամրագրել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքում ՋԳ արտանետումների համար թույլտվություն ստանալու հիմնական պայմանները¹²:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքով հստակեցվել է կառավարության լիազորությունները մթնոլորտային օդի պահպանության բնագավառում՝ կապված մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների պետական հաշվառման կարգի և ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգի հաստատման հետ: Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգի հաստատման ուղղությամբ ձեռնարկված իրավաինստիտուցիոնալ միջոցառումներից է՝ «Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին Կառավարության որոշման» նախագծի մշակումը, որի արդյունքում ՋԳ արտանետումների գույքագրման կարգն ավելի համակարգված և ԵՄ դիրեկտիվների համապատասխան կիրականացվի:

2. ՀՀ կառավարության ծրագրի շրջանակներում (2017թ. սկսած) նախատեսվել և իրականացվել են կլիմայի փոփոխությանն ուղղված միջոցառումներ՝ կապված Կլիմայի

¹² Այս առաջարկությունը արվել է նաև «Կլիմայի մասին» ՀՀ օրենքի նպատակով մշակված հայեցակարգային առաջարկությամբ: Մասնավորապես առաջարկվում է կարգավորել ՋԳ արտանետումների թույլտվություններին վերաբերող հիմնական հարցերը (հայտի բովանդակությունը, մոնիթորինգի պլան ունենալու պահանջը, թույլտվության բովանդակությունը, ժամկետները, թույլտվություն տրամադրելու գործընթացի կասեցման հիմքերը, թույլտվության մերժման հիմքերը, թույլտվություն անվավեր ճանաչելու հիմքերը) գործող «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքով, իսկ թույլտվություն ստանալու պայմանների և ընթացակարգի մասով հղում անել ընդունվելիք կառավարության որոշմանը:

փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագրի ընդունման, կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների մեղմման և կանխարգելման ու հարմարվողականության գործողությունների իրականացման հետ՝ համաձայն միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների¹³, «Փարիզյան համաձայնագրի ներքո ՀՀ 2021-2030 թվականների Ազգային մակարդակով սահմանված գործողություններ»-ի հաստատման հետ¹⁴, ինչպես նաև Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացման հետ¹⁵: Վերջինիս շրջանակներում նախատեսվում են միջոցառումների խումբ՝ ուղղված կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագրի և 2026-2035 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին Կառավարության որոշման, «Կլիմայի փոփոխության մասին» Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2026-2035 թվականների Ազգային մակարդակով սահմանված հանձնառությունները» հաստատելու մասին» Կառավարության որոշման, «Կլիմայի փոփոխության մասին» Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ (մինչև 2050 թվականը) ցածր ածխածնային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծերի մշակման և «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի թափանցիկության ազգային շրջանակի կառուցման հետ: Թվարկված միջոցառումներից՝ ՀՀ ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ (մինչև 2050 թվական) ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը մշակվել է և ներկա պահին նախագիծը շրջանառվում է շահագրգիռ գերատեսչություններում: ՀՀ ստորագրումից ի վեր Կառավարության ծրագրերում ամրագրված կլիմայի միջոցառումներն ավելի որոշակիացվել ու հստակեցվել են, կոնկրետացվել են նպատակներն ու ակնկալվող արդյունքները¹⁶: Ելնելով միջազգային փորձից, հարկ է նշել, որ մի շարք պետություններ իրենց կառավարության ծրագրերով որպես միջոցառումային համագործակցության արդյունք նախատեսում են կլիմայի փոփոխության հետ կապված ձեռքբերումներն և ամրագրում միջոցառումային համագործակցության մարտահրավերները:

3. 2021թ. ապրիլի 22-ին ՀՀ կառավարությունը¹⁷ հաստատեց Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների Ազգային մակարդակով սահմանված գործողությունները (ԱՍԳ), որը ՄԱԿ ԿՓՇԿ քարտուղարություն է ներկայացվել 2021թ.-ի ապրիլի 30-ին: ԱՍԳ-ն ողջ տնտեսության համար սահմանում է 1990-ի նկատմամբ մինչև 2030թ.-ը 40%-ով ջերմոցային գազերի

¹³ <https://www.gov.am/files/docs/3133.pdf>

¹⁴ Հայաստանը պարտավորվում է մինչև 2030 թվականն անտառածածկի ավելացում՝ Հայաստանի տարածքի 12.9 % չափով, ինչպես նաև ջերմոցային գազերի 40 % նվազեցում՝ 1990 թվականի արտանետումների մակարդակի համեմատ:

¹⁵ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր:

¹⁶ https://www.arlis.am/Annexes/6/2021_N1902hav.1.pdf

¹⁷ Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 610-Լ որոշում:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=151985>

արտանետումների կրճատման թիրախ: Ռազմավարական այս փաստաթղթի միջոցով սահմանվել են ոլորտների շրջանակը, պլանավորման գործընթացները, կլիմայի փոփոխության հետ կապված հարմարվողականության էկոհամակարգային մոտեցումը, մեթոդալոգիական մոտեցումները: ԱՍԳ-ն հիմնված է կանաչ տնտեսության սկզբունքի վրա և համատեղելի է Կայուն Զարգացման Նպատակների հետ, որոնք արտացոլված են Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներում:

II. Մշակված իրավական ակտեր

1. Ազգային մակարդակում սահմանված գործողությունները թեև պարունակում են ինստիտուցիոնալ և վարչական հիմքեր, բայց գործառնական ապահովումը հնարավոր է միայն ծրագրային, ֆինանսական և ներդրումային միջոցառումների իրականացմամբ: Այդ նպատակով մշակվել են **Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2023-2030 թվականների Ազգային մակարդակով սահմանված գործողությունների իրականացման ծրագիրը, ֆինանսավորման ռազմավարությունը և ներդրումային պլանը**: Այս իրավական փաթեթի մշակումը վկայում է ՀՀ կողմից կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ոլորտներում ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված կամքի ու քայլերի մասին, այդ թվում՝ ՀԸԳՀ և ՃԲ միջոցառումների հետ կապված: Նախագիծը սահմանում է ծրագրի իրականացման պայմանները, ԱՍԳ իրականացման ինստիտուցիոնալ հենքը, ծրագրի իրականացման ինստիտուցիոնալ շրջանակը, ԱՍԳ վերանայման և իրականացման խնդիրներն ու մարտահրավերները, գենդերային նկատառումների ինտեգրումը, ԱՍԳ թիրախին հասնելու քաղաքականությունները (էներգետիկա, արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում, գյուղատնտեսություն, թափոնների կառավարում, անտառային տնտեսություն), հարմարվողականության ազգային շրջանակը, ԱՍԳ իրականացման առաջընթացի մոնիթորինգը և հաշվետվողականությունը: Ծրագրի մակարդակով հստակ վեր են հանվել խնդիրները և առաջարկվել լուծումներ:

Մշակվել է նաև ԱՍԳ իրականացման ֆինանսավորման ռազմավարությունը, որի հիմնական նպատակը՝ ԱՍԳ իրականացման ծրագրի ֆինանսավորման գնահատումը, հավաքագրումը, ընդլայնումն ու կիրառումն է: Ֆինանսական ռազմավարությամբ ներկայացվում են կլիմայական ֆինանսավորման վիճակը, ԱՍԳ իրականացման ֆինանսավորման կարիքը և մարտահրավերները, ռեսուրսների հավաքագրման քաղաքականությունը:

Ներդրումային պլանի մշակումը ևս ուղղված է ԱՍԳ գործառնական իրականացմանը: Ընդ որում, ներդրումային ծրագրերը բավականին մանրամասն տեղեկություններ են պարունակում դրանց նախապատմության, նպատակի, ֆինանսավորման կարիքների, գործողությունների ժամկետների և կազմի, պատասխանատու շահագրգիռ կողմերի, սահմանափակումների և ակնկալվող արդյունքների մասին, ինչը կօգնի Հայաստանին հասնելու ԱՍԳ նպատակներին և կնպաստի երկրի ցածր արտանետումներով երկարաժամկետ և կլիմայադիմակայուն զարգացմանը:

2. «Հայաստանի Հանրապետության ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ (այսուհետ՝ ԶԳ-ՑԱԶԵՌ, մինչև 2050 թվական) ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, բացի արտանետվող ԶԳ քանակի կրճատումից, դրական ազդեցություն կունենա տեղական համայնքների կենսապայմանների վրա՝ տնտեսական աճի, սոցիալական բարեկեցության, շրջակա միջավայրի պահպանման և անվտանգության բարելավման վրա: Նախագծի ընդունմամբ ակնկալվող արդյունքներն են. ԶԳ-ՑԱԶԵՌ իրականացմանն ուղղված գործողությունների, անհրաժեշտ ինստիտուցիոնալ և ռեսուրսային հենքի, ինչպես նաև՝ մոնիթորինգի, գնահատման և պարբերական վերանայման մոտեցումների հստակ սահմանում, ԶԳ-ՑԱԶԵՌ իրականացման ֆինանսավորման արդյունավետ գնահատման, հավաքագրման, ընդլայնման և կիրառման ներդրված համակարգեր՝ կյանքի կոչելու ԶԳ-ՑԱԶԵՌ իրականացման ծրագրում առանձնացված առաջնահերթ գործողությունները, ԶԳ-ՑԱԶԵՌ-ով հռչակված կլիմայական հավակնությունները երաշխավորելու նպատակով նույնականացված լրացուցիչ ներդրումային ծրագրեր:

3. «Կլիմայի մասին» ՀՀ օրենքի մշակման նպատակով նախապատրաստվել է հայեցակարգային առաջարկություն, որը ստանձնած միջազգային պարտավորությունների արդյունավետ կատարման համար առանցքային նշանակություն ունի: Հայեցակարգային առաջարկությունը միտված է ԵՄ մի քանի հրահագնների նպատակների միաժամանակյա մոտարկմանը, մասնավորապես, քաղաքականությունների կառավարման, հանրապետական և տեղական մակարդակով իրավասու մարմինների դերի և իրավասությունների շրջանակի հստակեցման/սահմանման, ԶԳ արտանետումների կադաստրի, ինչպես նաև ՄԱԿ-ի ԿԺՇԿ ներքո Երկամյա թափանցիկության զեկույցների կազմման նպատակով տվյալների հավաքագրման ինստիտուցիոնալիզացիայի, անկախ փորձագիտական աջակցության մեխանիզմի ստեղծման, ռիսկերի գնահատման, հանրային ֆինանսների, ՉՀՀ համակարգի ստեղծման, միջգերատեսչական համակարգի մարմնի գործունեության բարելավման, կլիմայական որոշումների ընդունման գործընթացին հանրային մասնակցության ապահովման մեխանիզմների և հաշվետվողականության ապահովման և այլն:

Արտանետումների առևտրի համակարգ (ԱԱՀ). Ճանապարհային քարտեզով ամրագրված միջոցառումների շրջանակում ՀՀ-ը ԱԱՀ մոտարկման հետ կապված որևէ միջոցառում կատարելու պարտավորություն չունի: Այնուամենայնիվ, ելնելով 2003/87 հրահանգի մոտարկման անհրաժեշտությունից, ինչպես նաև միջազգային փորձագետների կողմից ՀՀ-ում ԱԱՀ հնարավոր կիրառման հարցի վերաբերյալ առկա հետազոտական բազայից, անդրադարձ է կատարվել նաև այս հարցին:

Մասնավորապես, ելնելով խնդրո առարկայի կարգավորման միջազգային պրակտիկայից և ՀՀ-ում ԱԱՀ կիրառման վերաբերյալ միջազգային փորձագիտական մակարդակով արված հետազոտական մոտեցումներից, առաջարկվում է ընտրության հնարավորություն ԱԱՀ ներդրման կամ ածխածնի հարկի կիրառման միջև: Ընդ որում, առաջարկվում է ածխածնի հարկի իրավական կարգավորման երկու եղանակ, առաջինը՝ ածխածնի հարկը կարող է

դիտարկվել շրջակա միջավայրն աղտոտող արտանետվող նյութերի ցանկում: Այս պարագայում ՀՀ հարկային օրենսգրքում հատուկ իրավական կարգավորում ընդգրկելու կարիք չի լինի, կսահմանվի միայն դրույքաչափ և հարկման կարգավորումներ: Փոխարենը, ԶԳ-ը պետք է ներառվեն շրջակա միջավայրն աղտոտող նյութերի ցանկում: Երկրորդ, ածխածնի հարկը կարելի է ձևակերպել որպես բնապահպանական հարկի առանձին տեսակ՝ համապատասխան լրացում կատարելով նաև ՀՀ հարկային օրենսգրքում¹⁸:

ԱԱՀ-ին անդրադարձը հայեցակարգի շրջանակներում. Հայեցակարգի մակարդակով որոշված չէ (հնարավոր էլ չէր) ՀՀ-ում ածխածնի գնագոյացման գործիքների կոնկրետ տեսակի կիրառելիության հարցը: Գործիքակազմի տեսակի ընտրությունը հնարավոր է քաղաքական և տնտեսական նպատակահարմարությունից ելնելով: Ածխածնի գնագոյացման գործիքների ընտրության վերաբերյալ կատարված միջազգային հետազոտության համաձայն Հայաստանի տնտեսության ծավալները, երկրի ինստիտուցիոնալ և ձեռնարկատիրական պատրաստվածությունը վկայում են այն մասին, որ ածխածնի հարկն (ԱՀ) ավելի նախընտրելի տարբերակ կարող է լինել, քան արտանետումների առևտուրը՝ պայմանավորված փոքրաթիվ պոտենցիալ տեղակայանքների, իրացվելիության ապահովման հավանական դժվարությունների և փոխկապակցված էներգակիրների՝ փոխանակման հիման վրա առևտրի բացակայության պայմաններում, որոնք բոլորն էլ կարևոր նախադրյալներ են արտանետումների առևտրի հաջողված սխեմաների համար¹⁹:

Հետազոտության մեջ տրվում են ԱՀ և ԱԱՀ առավելությունները, թերությունները և օպտիմալ կիրառելիությունը: Հավասարակշռելով երկու տեսակների թերություններն ու առավելությունը, կիրառման վերաբերյալ եզրահանգումը հետևյալն է. ածխածնի հարկն ամենաարդյունավետն է, երբ այն կիրառվում է միայն վառելիքի նկատմամբ, և, հետևաբար, այն լավ ընտրություն է այն իրավազոր տարածքների համար, որտեղ արտանետումների մեծ մասի աղբյուր են հանդիսանում այրման գործողությունները: Այն նաև ավելի քիչ բարդ է, քան ԱԱՀ-ի ներդրումը, և, հետևաբար, կարող է գործարկվել ավելի կարճ ժամանակահատվածում: ԱԱՀ-ն լավագույն արդյունք ապահովում է այն դեպքում, երբ դրա ծածկույթը ներառում է զգալի թվով կազմակերպություններ, ինչը ապահովում է իրացվելիություն շուկայում: Այն նաև ավելի կիրառելի է, երբ զգալի արտանետումների ծավալներ են առաջանում արդյունաբերական գործընթացներից և ոչ միայն հանածո վառելիքի այրումից²⁰:

Արևելյան գործընկերության երկրների շրջանակում արտանետումների առևտրի համակարգի վերաբերյալ ԵՄ հրահանգների մոտարկմանն ուղղված գործողությունները պատկերված են Աղյուսակ 2-ում.

¹⁸ «Կլիմայական քաղաքականության մասին օրենք»-ի մշակման նպատակով մշակվել է հայեցակարգային առաջարկություն, 2023թ.:

¹⁹ Ածխածնի գնագոյացման հնարավորությունները Հայաստանում, հետազոտության հեղինակ Օլգա Կուցուկակեն:

²⁰ Ածխածնի գնագոյացման հնարավորությունները Հայաստանում, հետազոտության հեղինակ Օլգա Կուցուկակեն:

Աղյուսակ 2. 2003/87 հրահանգի մոտարկման միջազգային պրակտիկա

Երկիր	Ընդունված նորմատիվ իրավական ակտ
Ուկրաինա	- 2021թ. դեկտեմբերին Ուկրաինայում ընդունված նոր հարկային օրենսգիրքը ներառում է ընթացիկ ածխածնի հարկի եռապատկումը մինչև 2024 թվականը: Արտանետումների առևտրի համակարգը դեռևս ստեղծված չէ, որպեսզի արագորեն իրականացվեն կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումներն ու դեկարբոնիզացիան ²¹
Վրաստան	- Վրաստանը չի մոտարկել ջերմոցային գազերի արտանետումների առևտրի սխեմա սահմանող ԵՄ հրահանգը: Վրաստանը իր օրենսդրությունը չի մոտարկվել Ջանքերի փոխանակման կարգավորման կամ հողօգտագործման, հողօգտագործման փոփոխության կարգավորման և անտառտնտեսության կանոնակարգի հետ, քանի որ չունի ածխածնի գնագոյացման որևէ քաղաքականություն, բայց ակնկալվում է, որ որոշ դրույթներ կներառվեն ազգային օրենսդրության մեջ Էներգետիկ համայնքի միջոցով ²² : ԵՄ և Վրաստանը մշակել են աղյուսակ, որը եվրոական կանաչ օրակարգին համապատասխան քարտեզագրում է Վրաստանի օրենսդրությունն ու ռազմավարությունները: Իրավական ակտերի այդ շրջանակում որպես բաց մատնանշվում է արտանետումների առևտրի համակարգի բացակայությունը և ածխածնի սահմանի ճշգրտման մեխանիզմը ²³
Մոլդովա	- Մոլդովան չի մոտարկել ԵՄ արտանետումների առևտրի համակարգը սահմանող ԵՄ 2003/87 դիրեկտիվը ²⁴

ԵՄ և ՀՀ միջև ՀԸԳՀ ձևաչափում այս հարցի դիտարկումը վկայում է ածխածնի առևտրի համար նախապատրաստական միջոցառումների իրականացման ընթացքի մասին (հոդված 54 (է)): Ածխածնի առևտրի վերաբերյալ ՀԸԳՀ ձևակերպումները չեն պարտավորեցնում Հայաստանին ստանձնել ածխածնի առևտրի հանձնառություն, այլ փոխարենը խրախուսում են համագործակցությունը ածխածնի առևտրին նախապատրաստվելու ուղղությամբ: Համաձայնագրի նպատակն էլ ավելի պարզ է դառնում դրա Հավելվածների ուսումնասիրության ժամանակ: Գլուխ 4-ի Հավելված IV-ի, Կլիմայական գործողությունները V վերնագրի ներքո համագործակցության այլ քաղաքականություններով թվարկվում են ԵՄ կոնկրետ կանոնակարգերը, որոնք Հայաստանը պարտավոր է տեղայնացնել, ներառյալ երկու կանոնակարգ, որոնք վերաբերում են տեղակայանքի մակարդակով ՉՀՀ համակարգի ստեղծմանը, ինչը կհանդիսանա նախապատրաստում ածխածնի առևտրին, դրանք են՝

²¹<https://www.eeas.europa.eu/sites/default/files/documents/Association%20Implementation%20Report%20on%20Ukraine%20-%20Joint%20staff%20working%20document.pdf>

²²EU GREEN DEAL IMPLICATION FOR GEORGIA, Maka Tsereteli, 2023
<https://www.greens.ge/storage/publications/June2023/cunaj009GjuhVmtuOqUv.pdf>

²³ <https://www.undp.org/sites/g/files/zskgke326/files/2023-02/undp-georgia-eu4climate-green-deal-assessment-2022-eng.pdf>

²⁴Analytical Report following the Communication from the Commission to the European Parliament, the European Council and the Council Commission Opinion on the Republic of Moldova's application for membership of the European Union, EC, Brussels, 2023, https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/system/files/2023-02/SWD_2023_32_%20Moldova.pdf

- 2012 թ. հունիսի 21-ի թիվ 601/2012 կանոնակարգ Ջերմոցային գազերի արտանետումների *չափումների և հաշվետվայնության* վերաբերյալ՝ համաձայն Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2003/87/ԵԽ դիրեկտիվի (ԵՄ ԱԱՀ դիրեկտիվ),
- 2012թ. հունիսի 21-ի թիվ 600/2012 կանոնակարգ ջերմոցային գազերի արտանետումների և տոննա-կիլոմետր հիմունքով հաշվետվությունների *հավաստագրման* և հավաստագրողների հավատարմագրման վերաբերյալ՝ համաձայն Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2003/87/ԵԽ դիրեկտիվի,
- Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2013 թ. մայիսի 21-ի թիվ 525/2013 կանոնակարգ ջերմոցային գազերի արտանետումների *չափումների և հաշվետվայնության* մեխանիզմի և ազգային և ԵՄ մակարդակով կլիմայի փոփոխությանն առնչվող այլ տեղեկությունների ներկայացման և թիվ 280/2004/ԵԽ որոշումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ, որով կարգավորվում է՝
 - Ջերմոցային գազերի գույքագրման ազգային համակարգի ստեղծումը (հոդված 5),
 - Քաղաքականությունների, միջոցառումների և կանխատեսումների ազգային համակարգի ստեղծումը (հոդված 12):

Ածխածնի առևտրից մինչև ածխածնի հարկումը և հաշվանցումը կատարելու նպատակով անհրաժեշտ է տեղակայման մակարդակի ՉՀՀ-ի ներդրման պահանջի կատարումը, որն էլ կծառայի որպես քաղաքականությունների և միջոցառումների իրականացման առաջընթացի արձանագրման կարևոր գործիք, և, վերջապես, կնախապատրաստի երկրին ներդնելու ԵՄ ածխածնի սահմանային ճշգրտման հարկը²⁵:

Ավիացիոն արտանետումներ. Ինչ վերաբերում է 2003/87 հրահանգով սահմանված ավիացիոն արտանետումների հարցին, հարկ է նշել, որ Ավիացիոն գործունեության և դրանից առաջացող արտանետումների դեպքում 2003/87/ԵՀ հրահանգի, թիվ 601/2012 կանոնակարգի (ԵՄ) և թիվ 600/2012 կանոնակարգի (ԵՄ) դրույթների կիրարկումը կախված է Միջազգային քաղաքացիական ավիացիոն կազմակերպության՝ Համաշխարհային շուկայական միջոցների (ՀՇՄ) վերաբերյալ քննարկումների արդյունքներից²⁶: ՀԸԳՀ համաձայն, եթե ԻԿԱՌ-ն չհամաձայնի ավիացիայի համար գլոբալ շուկայահեն միջոցառման սխեմայի կիրառմանը, ապա Հայաստանը համաձայնում է կիրառել ԵՄ ներսում կիրառվող ավիացիոն արտանետումների հետ կապված միջոցառումները: Արտանետումների առևտրի համակարգի նպատակը ՋԳ արտանետումների սահմանափակումն է տարբեր ոլորտներում, այդ թվում՝ ավիացիայի: Սույն հրահանգի շրջանակներում ավիացիոն արտանետումների հետ կապված սահմանվում են ավիացիոն գործունեության տեսակները (Հավելված 1), ինչպես նաև այն թռիչքների ցանկը, որոնց նկատմամբ հրահանգը չի տարածվում: Հրահանգով սահմանվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ ավիացիոն

²⁵Ածխածնի գնագոյացման հնարավորությունները Հայաստանում, հետազոտության հեղինակ Օլգա Կուցուկակեն:

²⁶ <https://www.mfa.am/filemanager/eu/cepa.pdf>

գործունեությունը, արտանետումը, օդանավ շահագործողը, վերագրվող ավիացիոն արտանետումները, ինչպես նաև հրահանգով կարգավորվում են ավիացիոն գործունեության տեսակների մասով քվոտաների հատկացման և տրամադրման, ավիացիոն գործունեություն իրականացնելու արդյունքում արտազատվող արտանետումների (վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների) ստուգման և ավիացիային հատկացվող քվոտաների ընդհանուր քանակի հետ կապված հարցերը: Միաժամանակ, պատժամիջոցների շրջանակում, սահմանվում է ավելցուկային արտանետումների համար տուգանք վճարելու պատասխանատվությունը՝ օդանավ շահագործողի կողմից՝ բավարար քանակությամբ քվոտաներ չհանձնելու համար:

- Տեղեկատվության հասանելիություն. 2003/87 դիրեկտիվի 17-րդ հոդվածը սահմանում է տեղեկատվության ստացումը, մասնավորապես, որ քվոտաների հատկացման վերաբերյալ որոշումները, տեղեկություններն այն նախագծային գործունեության վերաբերյալ, որին մասնակցում է անդամ պետությունը, կամ վերջինս մասնակցելու իրավունք է տալիս մասնավոր կամ հանրային սուբյեկտներին, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումների թույլտվությամբ պահանջվող և իրավասու մարմնի կողմից ներկայացվող՝ արտանետումների վերաբերյալ հաշվետվությունները հանրության համար դարձվեն հասանելի՝ համաձայն 2003/4/ԵՀ հրահանգի: Թափանցիկության ապահովման նպատակով, հանրությունը պետք է արտանետումների մոնիթորինգի արդյունքների և թույլտվությունների բաշխման վերաբերյալ տեղեկատվության հասանելիության իրավունքն ունենա, որը ենթակա է սահմանափակումների՝ նախատեսված բնապահպանական տեղեկատվության հանրային հասանելիության վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003/4 ԵՀ հրահանգով: 2003/4 ԵՀ հրահանգով երաշխավորվում է հանրային իշխանության կողմից տրամադրվող բնապահպանական տեղեկատվության հասանելիության իրավունքը և ապահովվում, որպեսզի այդ տեղեկատվությունն արագ կերպով հասանելի դարձվի և տրամադրվի հանրությանը: Հեռահաղորդակցությունն ու էլեկտրոնային տեխնոլոգիաները առանցքային դերակատարում են ունեցել տեղեկատվության հասանելիության ապահովման համար և վերջիններիս օգտագործումը պետք է խրախուսվի (հոդվ. 1): Հրահանգի 7-րդ հոդվածը վերաբերում է բնապահպանական տեղեկատվության տարածման մանրամասներին: Հրահանգի 3-րդ հոդվածով ամրագրված են այն բոլոր պայմանները, որոնց համապատասխան բնապահպանական տեղեկատվությունը պետք է տրամադրվի ըստ պահանջի: Հրահանգով նաև նախատեսվում են մերժման հիմքերը (հոդ. 4): Դիմումատուները նաև իրավունք պետք է ունենան տեղեկատվության մերժման կամ որ պատշաճ պատասխանի դեպքում դիմել դատարան (հոդվ. 6): Քննարկվող հրահանգի դրույթներն առավելապես հիմնվում են Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն, հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին Օրիուսի կոնվենցիայի հիման վրա: 2001 թվականի հունիսի 27-ին ՀՀ-ը վավերացրել է Օրիուսի կոնվենցիան, որի կատարմանն ուղղված ՀՀ կողմից կատարվել են բազմաթիվ ինստիտուցիոնալ, իրավական և վարչական միջոցառումներ: Հարկ է նշել, որ ի կատարումն Օրիուսի կոնվենցիայի 2023 թվականի մայիսի 3-ին Ազգային ժողովի

կողմից 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը²⁷: Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով առաջիկա երկու տարիների ընթացքում նախատեսվում է մշակել 13 ենթաօրենսդրական ակտեր: Ներկայումս մշակվել և շրջանառության մեջ է գտնվում ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1325-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը:

Ներկայացվող օրենքի մակարդակով սահմանվել են նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության և կլիմայի փոփոխության մեղման հասկացությունները:

Հանրության իրազեկման, պետական մարմիններից տեղեկատվություն հայցելու, նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիք հայտնելու տեղեկատվական հարթակներ են՝ www.e-gov.am, www.e-draft, www.e-request, www.e-register կայքերը: Այս էլեկտրոնային գործիքակազմերից որոշները հնարավորություն են ընձեռում ծանոթանալ իրավական ակտերի նախագծերին և մասնակցել իրավաստեղծ գործունեությանը վաղ փուլում՝ հիմնավորված առաջարկություններ և նկատառումներ ներկայացնելու միջոցով, ինչպես նաև մասնակցել հանրային քննարկումներին: Այս հարթակներից բացի կլիմայի, արտանետումների, ՋԳ արտանետումների աղյուսակավորված տվյալների վերաբերյալ և համահունչ տեղեկատվություն կարելի է ստանալ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայք էջից²⁸:

Քննարկվող 2003/4/ԵՀ հրահանգով կարգավորվող գործընթացները մասամբ կանոնակարգվում են «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-14 հոդվածներով: Բնապահպանական տեղեկատվության հանրային հասանելիության վերաբերյալ 2003/4/ԵՀ հրահանգով ամրագրված դրույթների իրականացման մասով՝ ՇՄ նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում /www.env.am/ տեղադրված է և պարբերաբար թարմացվում է խնդրո առարկա հաշվետվությունները, զեկույցները, ՇՄ որակի վերաբերյալ տեղեկատվություն, միջազգային պայմանագրեր, կոնվենցիաներ և այլն/ ողջ տեղեկատվությունը՝ ղեկավարվելով ՀՀ բնապահպանության նախարարի 02.10.2017թ.-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքի թարմացման և տեղեկատվության տեղադրման կարգը հաստատելու մասին» N338-Ա հրամանով: Բացի դրանից, ՀՀ Ջրային օրենսգրքի 20-րդ հոդվածի համապատասխան հասարակայնության ծանուցման են ենթակա ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների նախագիծը, ջրի ազգային ծրագրի նախագիծը,

²⁷ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=8747&lang=arm>

²⁸ <http://www.mnp.am/shrjaka-mijavayr/jermocayin-gazer?fbclid=IwAR1OuRAZdOsRlxnov0nXRfzEE-DVaXdTggghxCpGOSXBMvm9S6THqaxstmc>

Ավելի մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ՝ ծանոթանալով ՀՀ ՋԳ ազգային կադաստրի հաշվետվությունների հետ: Կլիմայի փոփոխությանն առնչվող հավաքագրված, համակարգված և հասանելի տեղեկատվություն կարելի է ստանալ www.nature-ic.am կայքից:

ջրավազանային կառավարման պլանների նախագծերը, ջրօգտագործման քննարկվող թույլտվությունները, ջրերի ստանդարտների նախագծերը, ջրերի սակագնային ռազմավարության նախագիծը: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» կառավարության որոշմանը համապատասխան իրականացվում են ազդեցության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հանրային ծանուցումներ և քննարկումներ:

Տարբեր պետություններ այս հրահանգի մոտարկման նպատակով ընդունել են իրավական բազմաթիվ ակտեր²⁹: Այդ ակտերն են՝ Բնապահպանական տեղեկատվության հանրային հասանելիության մասին Բելգիայի օրենքը (2006թ.), Բնապահպանական տեղեկատվության տարածման վերաբերյալ 2005թ. հոկտեմբերի 28-ի կառավարության որոշում (Բելգիա), Հանրային տեղեկատվության հասանելիության մասին Բուլղարիայի օրենքը (07.07.2000թ.), Շրջակա միջավայրի պահպանության մասին Բուլղարիայի օրենքը (11.04.2006թ.), Բնապահպանական տեղեկատվության հասանելիության մասին Դանիայի օրենքը (27.04.1994թ.), Այլ եղանակով, քան թղթի վրա տպված բնապահպանական տեղեկատվության հասանելիության համար վճարման կարգ (Դանիա, 24. 06.1994թ.), Վարչական ակտի հանրային հասանելիության մասին Դանիայի օրենքը, Բնապահպանական տեղեկատվության ակտիվ տարածման ակտ (Դանիա), Քիմիական նյութերի վերաբերյալ ակտ (Էստոնիա), ՇՄԱԳ մասին Էստոնիայի օրենքը (24.03.2005), Քաղաքացիների տեղեկատվության ակտ, Շրջակա միջավայրի մասին ակտ (Իռլանդիա), Բնապահպանական հարցերով տեղեկատվության հասանելիության, հանրային մասնակցության և արդարադատության մատչելիության իրավունքի մասին օրենք (Իսպանիա), Տեղեկատվության հասանելիության վերաբերյալ բնապահպանական ակտ (Կիպրոս), Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, Բնապահպանական պաշտպանության մասին օրենք, Ազգային վիճակագրության մասին ակտ, Աղտոտման մասին օրենք, Տեղեկատվության ազատության մասին օրենք (Լատվիա):

Միջոցառում 2. (121) - *Մասնակի կադրաված*



ՀՀ պարտավորությունը – մինչև 2026 թվականի առաջին եռամսյակը մոտարկել ազգային օրենսդրությունն Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 525/2013 կանոնակարգին:

Այս միջոցառմամբ ՀՀ-ն պարտավորվել է ստեղծել կլիմայի փոփոխությանն առնչվող ջերմոցային գազերի արտանետումների (ներառյալ ավիացիոն արտանետումների) գույքագրման ազգային համակարգ, քաղաքականությունների, միջոցների և կանխատեսումների ներպետական համակարգը և հզորացնել համապատասխան ինստիտուցիոնալ կարողություններ /525/2013/ ԵՄ Կանոնակարգի հոդվածներ 5 և 12/ համաձայն:

Կանոնակարգի 5-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ պետք է ստեղծի, շահագործի և ձգտի

²⁹ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/NIM/?uri=celex:32003L0004>

շարունակաբար կատարելագործել գույքագրման ազգային համակարգերը՝ ազգային համակարգերի վերաբերյալ ՄԱԿ-ի ԿՓՇԿ պահանջներին համապատասխան՝ ջերմոցային գազերի մարդածին արտանետումները և կլանումները հաշվարկելու և դրանց ջերմոցային գազերի կադաստրների թափանցիկությունը, ճշգրտությունը, համաձայնեցվածությունը, համադրելիությունն ու ամբողջականությունն ապահովելու նպատակով: ՀՀ պետք է ապահովի, որ իր իրավասու մարմիններին մատչելի լինեն՝ ջերմոցային գազերի ազգային կադաստրների նախապատրաստման նպատակով 2003/87/ԵՀ հրահանգով գործողությունների և օբյեկտների վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացված տվյալները և մեթոդները:

12-րդ հոդվածի համաձայն, ՀՀ պետք է կազմի, շահագործի և ձգտի շարունակաբար կատարելագործել քաղաքականությունների և միջոցառումների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու և ջերմոցային գազերի մարդածին արտանետումների և դրանց կլանման կանխատեսումների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու համակարգը: Այդ համակարգերը ներառում են քաղաքականությունը գնահատելու և կանխատեսումներ անելու մասով ՀՀ համապատասխան ինստիտուցիոնալ, իրավական և ընթացակարգային կարգավորումներ:

Պարտավորությունն իրականացնելու նպատակով, ՀՀ պետք է ընդլայնի մոնիտորինգի, հաշվետվողականության և վերանայման ընթացակարգերն ու կանոնները, ստեղծի ԶԳ հաշվառման համակարգ՝ բարելավվելով ԶԳ հաշվառման թափանցիկությունն ու լրակազմությունը, ներառի տեղեկատվություն կլիմայի փոփոխության հարմարվողականության պլանավորման և ռազմավարության վերաբերյալ, ներառյալ՝ ջրհեղեղների, երաշտների և արտակարգ բարձր ջերմաստիճանների մասին, ապահովվի զարգացող երկրներին տրամադրվող ֆինանսական և տեխնոլոգիական աջակցության հաշվետվողականությունը, ապահովվի տվյալների թափանցիկությունը, լրակազմությունը և հստակությունը:

Ջերմոցային գազերի գույքագրման մշակման համար իրավական հիմք են՝ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը, Կառավարության 2016թ. դեկտեմբերի 8-ի N 49 որոշումը³⁰, Կառավարության 1999թ. ապրիլի 22-ի «Մթնոլորտային օդի վրա վտանգավոր ազդեցությունների պետական ռեգիստրը հաստատելու մասին» N 259 որոշումը³¹ և այլն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքում ամրագրվել են դրույթներ³² կապված մթնոլորտային օդն աղտոտող

³⁰Նշված որոշմամբ ներառված ոլորտային միջոցառումները վերաբերում են ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ն և Փարիզյան համաձայնագրին, Օզոնի շերտի պահպանության մասին Վիեննայի կոնվենցիային, ՄԱԿ-ի կենսաբազմազանության մասին կոնվենցիային և Կարթագենի արձանագրությանը՝ կենսապահովության մասին:

³¹Կառավարության այս որոշմամբ սահմանվում է օդի արտանետումների հաշվառման համակարգի բովանդակությունը, նպատակներն ու խնդիրները և դրանց ազդեցությունները:

³² Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ կետերը, ինչպես նաև 5-րդ գլուխը:

(վնասակար) նյութերի արտանետումների պետական հաշվառման կարգի և ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգի հաստատման, մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի արտանետումների պետական հաշվառման և ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման հետ: Նախատեսվում է մինչև ընթացիկ տարվա վերջ մշակել/ընդունել «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի արտանետումների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման և սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Ջերմոցային գազերի ազգային կադաստր. Ջերմոցային գազերի ազգային կադաստրը մշակվել է 1990-2019թթ. համար՝ ըստ Կլիմայի փոփոխության միջկառավարական խմբի (ԿՓՄԽ) 2006թ. ՋԳ ազգային կադաստրի ուղեցույցների³³:

Ըստ ԿՓՄԽ 2006թ. Ուղեցույցի՝ ՋԳ ազգային կադաստրն ընդգրկում է հետևյալ սեկտորները. «Էներգետիկա», «Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում» (ԱՊԱՕ), «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում» և «Թափոններ» և ներառում է ՋԳ ազգային կադաստրի ամփոփ հաշվետվություն, Կադաստրի սեկտորային աղյուսակներ՝ ըստ ԿՓՄԽ 2006թ. Ուղեցույցի, Կադաստրի սեկտորային աղյուսակներ՝ ըստ ԿՓՄԽ 2006թ. ուղեցույցի, Հիմնական աղբյուրների վերլուծություն, Անորոշությունների գնահատում, Համադրելի ժամանակային շարքեր՝ 1990-2019թթ. համար, Ամփոփ տեղեկատվություն նախորդ տարիներին ներկայացված կադաստրների և այլն:

Ի կատարումն 525/2013/ԵՄ Կանոնակարգի 5 հոդվածի մշակվել են.

- ✓ ««Ջերմոցային գազերի արտանետումների մասին» ձև 1-ՋԳ (երկամյա) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԽ որոշումը
- ✓ «Ջերմոցային գազերի գույքագրման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը:

««Ջերմոցային գազերի արտանետումների մասին» ձև 1-ՋԳ (երկամյա) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԽ որոշումը ներառում է տեղեկատվություն՝ կապված ջերմոցային գազերի արտանետումների քանակի՝ ըստ ջերմոցային գազերի, ջերմոցային գազերի արտանետումների քանակի՝ ըստ ոլորտների, ԳԳ CO₂ համ., նախորդ տարիներին համար ջերմոցային գազերի արտանետումների վերահաշվարկված քանակների՝ ըստ ջերմոցային

³³ <http://nature-ic.am/hy/publications/NationalReports/0/0>

գազերի (առանց «Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում» ոլորտի), ԳԳ CO₂ համ., նախորդ տարիների համար ջերմոցային գազերի արտանետումների վերահաշվարկված քանակների՝ ըստ ոլորտների, ԳԳ CO₂ համ.:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2020 թվականի փետրվարի 27-ի թիվ 10-Ա որոշմամբ ընդունված կլիմայի փոփոխության վիճակագրության զարգացման ճանապարհային քարտեզում սահմանված է, որ ազգային վիճակագրական գրասենյակները պետք է բարելավեն ԶԳ գույքագրումների համար պահանջվող տվյալները և վիճակագրությունը, մասնավորապես, ՀՀ ՎՊԽ ակտիվ աջակցություն պետական կառավարման մարմիններում վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևաթղթերի նախապատրաստման և հաստատման հարցում: Առաջարկվել է մշակել և շրջանառել՝ - գյուղատնտեսական թափոնների /հատկապես գոմաղբի/ հաշվառման և օգտագործման հաշվետվությունների ձևաթուղթը - տնային տնտեսությունների կողմից վառելիքայտի օգտագործման հաշվետվության ձևաթուղթ - տնային տնտեսության այլընտրանքային արտադրանքի և կենսավառելիքի օգտագործման հաշվետվության ձևաթուղթ³⁴:

Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգ. Նախագծի մշակումն իրականացվել է ԵՄ 525/2013/ԵՄ Կանոնակարգի և 2003/87 դիրեկտիվի պահանջներին համապատասխան, մասնավորապես, սահմանվել են ջերմոցային գազերի գույքագրման պետական լիազոր մարմինը /ՇՄՆ/, պատասխանատու/իրականացնող մարմինը (Պետական հիդրոոդերևութաբանական ծառայություն³⁵/, ջերմոցային գազերի գույքագրման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման կարգը, ջերմոցային գազերի գույքագրման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման և հավաքագրման ինստիտուցիոնալ կառուցակարգերը, ջերմոցային գազերի գույքագրման ապահովումը՝ ամբողջականության, թափանցիկության, հետևողականության, համադրելիության և ճշգրտության սկզբունքներին համապատասխան, ջերմոցային գազերի հաշվետվողականության ընթացակարգերը, ինչպես նաև ԶԳ գույքագրման որակի ապահովման և շտեմարանի վարման իրավական հարցերը: Կառավարության որոշման նախագծով սահմանված կարգը տարածվում է նաև ՀՀ ամբողջ տարածքում ջերմոցային գազերի մարդածին արտանետումների և կլանումների վրա և չեն ընդգրկում այն ջերմոցային գազերը, որոնք կարգավորվում են 1987 թվականի Օզոնային շերտը քայքայող նյութերին վերաբերող Մոնրեալի արձանագրությամբ և Օզոնային շերտի պահպանության Վիեննայի կոնվենցիայով: Որոշման նախագծի մակարդակով հստակեցվել է ոլորտային հասկացության ապարատը, տրվել են սահմանումներ, որոնք մինչ այդ ամրագրված չեն եղել³⁶: Սահմանվել են ԶԳ ազգային կադաստրի հաշվետվության ներկայացման ընդհանուր պահանջները, ԶԳ գույքագրման

³⁴ [99518218- Վ Կ-ճանապարհային քարտեզ.pdf](#)

³⁵ «Հիդրոոդերևութաբանական գործունեության մասին» օրենքի 12-րդ հոդված:

³⁶ ԶԳ արտանետումներ, արտանետման աղբյուր, ջերմոցային գազերի կլանիչ և ԶԳ կլանում, որակի ապահովում, արտանետումների գործակից, անորոշություն, հաշվետվության գործիքներ, ԶԳ ազգային կադաստր, ԶԳ գույքագրման շտեմարան

փուլերը, տեղեկատվության տրամադրման և հավաքագրման կարգը և ՋԳ գույքագրման շտեմարանը: Գույքագրման ազգային համակարգը գործելու է ըստ Կլիմայի փոփոխության միջկառավարական խմբի (ԿՓՄԽ) 2006 թվականի ջերմոցային գազերի արտանետումների ազգային գույքագրման ուղեցույցերի և ՄԱԿ ԿՓՇԿ Կողմերի համաժողովի կողմից համաձայնեցված դրանց հետագա թարմացումների ուղեցույցների:

Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգի հաստատումը առանցքային քայլ կլինի ՀՀ-ում արտանետումների գույքագրման իրավական հենքի ստեղծման, ինչպես նաև ՀԸԳՀ-ով ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ: Դիտարկվող կառավարության որոշման նախագծով տրվել են հասկացություններ, որոնք կնպաստեն ջերմոցային գազերի գույքագրման գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու համար: Մոտարկվող կանոնակարգում ամրագրված բոլոր հասկացությունները ամրագրվել են կառավարության որոշմամբ, պարզապես անհրաժեշտ է նաև նախատեսել հետևյալ հասկացությունները. «կանխատեսումներ առանց միջոցառումների», «կանխատեսումներ միջոցառումներով», «կանխատեսումներ լրացուցիչ միջոցառումներով» և «զգայնության վերլուծություն» /2013 թվականի մայիսի 21-ի թիվ 525/2013 կանոնակարգի³⁷ դրույթներին (ԵՄ) համապատասխան/: Նախագծի մակարդակով անհրաժեշտ է հստակեցնել հաշվետվողականության ընթացակարգերը:

Միաժամանակ, 525/2013 կանոնակարգի հինգերորդ հոդվածի պահանջն է, որպեսզի պետությունը ապահովվի, որպեսզի իր գույքագրման իրավասու մարմիններին մատչելի լինեն ՋԳ ազգային կադաստրների նախապատրաստման նպատակով 2003/87/ԵՀ հրահանգով գործողությունների և օբյեկտների վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացված տվյալները և մեթոդները, անհրաժեշտության դեպքում՝ ՋԳ ազգային կադաստրների նախապատրաստման նպատակով տարբեր ոլորտներում ֆտոր պարունակող գազերի վերաբերյալ թիվ 842/2006 կանոնակարգի (ԵՀ) 6(4) հոդվածի համաձայն ստեղծված հաշվետվությունների ներկայացման համակարգերի միջոցով հավաքված տվյալները, անհրաժեշտության դեպքում՝ ՋԳ ազգային կադաստրների նախապատրաստման նպատակով թիվ 166/2006 կանոնակարգով (ԵՀ) օբյեկտների կողմից հաշվետվություններում ներկայացված արտանետումները, դրանց հիմքում ընկած տվյալները և մեթոդաբանությունները, թիվ 1099/2008 կանոնակարգի (ԵՀ) համաձայն հաշվետվություններում ներկայացված տվյալները:

Միջոցառում 3. (122) - Մեկնարկած



ՀՀ պարտավորությունը – մինչև 2026 թվականի առաջին եռամսյակը մոտարկել ազգային օրենսդրությունն ԵՄ 2003/87/ԵՀ հրահանգի և 600/2012 կանոնակարգին:

³⁷ Կանոնակարգը կարգավորում է ջերմոցային գազերի արտանետումների դիտանցման եւ դրանց վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու, ինչպես նաեւ կլիմայի փոփոխությանն առնչվող այլ տեղեկությունների ներպետական և միության մակարդակներով ներկայացման մեխանիզմը:

Այս միջոցառմամբ ՀՀ-ն պարտավորվել է ապահովել ջերմոցային գազերի մարդածին արտանետումների ազգային կադաստրների և ազգային հաղորդագրությունների ու երկամյա զեկույցների պարբերական զարգացումը ԵՄ 2003/87/ԵՀ հրահանգի և 600/2012 կանոնակարգի համաձայն:

Հայաստանը, որպես Հավելված I-ում չներառված երկիր, մինչ այժմ ուներ հետևյալ հաշվետվողականության պարտավորությունները, որոնք Կլիմայի շրջանակային կոնվենցիայով նախատեսված ՀՀ շրջանակի հիմնական բաղադրիչներն էին³⁸.

- Ազգային հաղորդագրություններ (ԱՀ), ներկայացվել է 4 ԱՀ
- Միջազգային խորհրդատվության և վերլուծություն, առաջին ցիկլը 2017 թ., երկրորդը՝ 2019 թ.
- Երկամյա առաջընթացի զեկույց (ԵԱՀ), ներկայացվել է 3 ԵԱՀ:

Փարիզյան համաձայնագրի Ընդլայնված թափանցիկության շրջանակի (ԸԹՇ) ներքո հաշվետվությունների ներկայացման պահանջը նշանակում է, որ ներկայումս Հավելված I-ում չներառված Կողմերը կունենան նույն հաշվետվայնության պարտավորությունները, ինչ որ Հավելված I-ում ներառված Կողմերը: Միևնույն ժամանակ որոշակի ճկուն մոտեցում է նախատեսված զարգացող երկրների համար, որի անհրաժեշտությունը այդ Կողմերն ունեն՝ ելնելով իրենց կարողություններից, և վերջիններիս հաշվետվությունների ժամկետների միջև կնախատեսվեն ավելի երկար ընդմիջումներ: 2024 թվականից սկսած՝ զարգացող երկիր հանդիսացող Կողմերը պետք է ներկայացնեն.

☑ **Ազգային հաղորդագրություններ՝ 4** տարին մեկ պարբերականությամբ, որպես առանձին հաշվետվություն, կամ որպես երկամյա թափանցիկության զեկույցի (ԵԹՀ) այն տարիներին, երբ ԵԹՀ-ն հրապարակվում է: Կիոտոյի արձանագրության և Փարիզյան համաձայնագրի ներքո ԱՀ-ների միջև տարբերությունները դեռ վերջնականացված չեն, բայց դրանք կարելի է համարել աննշան

☑ **Երկամյա թափանցիկության զեկույցներ (ԵԹՀ).** պարունակում է գլուխներ ջերմոցային գազերի արտանետումների և կլանումների (ընդ որում, ԱԿՀ-ն կարող է ներկայացվել որպես առանձին հաշվետվություն կամ ԵԹՀ-ի մաս); ԱՍԳ իրագործման առաջընթացի արձանագրում, հարմարվողականության գործողությունների, անհրաժեշտ և ստացված աջակցության և հաշվետվություններում բարելավման ենթակա ոլորտների վերաբերյալ

☑ **Ազգային կադաստր** (ներառյալ՝ Ազգային կադաստրի հաշվետվություն) երկամյա պարբերականությամբ (տե՛ս Ազգային կադաստրի համակարգին վերաբերող մասը)

³⁸ <https://unfccc.int/ICA-cycle1>

<https://unfccc.int/ICA-cycle2>

☑ **Երկամյա պարբերականությամբ տեխնիկական փորձաքննություն**, որն իրենից ներկայացնում է Կողմերի հաշվետվություններում տեղեկատվության հետևողական ներկայացման տեխնիկական վերանայում՝ հաշվի առնելով Կողմի ԱՍԳ-ների ներդրման և իրագործման ուղղությամբ առաջընթացը, ինչպես նաև տեղեկատվությունը աջակցության վերաբերյալ և այլն: Սա նշանակում է, որ ազգային կադաստրի զեկույցը ենթակա է վերանայման, ամենայն հավանականությամբ, Կիոտոյի արձանագրության ներքո Հավելված I-ում ներառված երկրների վերանայումներին համանման եղանակով, ներառյալ նաև ԱՍԳ-ների ներդրման և իրականացման ուղղությամբ գրանցված առաջընթացի արձանագրման համար անհրաժեշտ տեղեկատվությունը

«Փարիզի համաձայնագրի ներքո Հայաստանի թափանցիկության ազգային շրջանակի կառուցում» ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի շրջանակներում մշակվել են ԶԳ գույքագրման բարելավման ազգային պլանը և 2018-2019թթ. ԶԳ կադաստրի հաշվետվությունը:

Փարիզյան համաձայնագրի ներքո ՀՀ 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողություններով հստակեցված են մեթոդոլոգիական մոտեցումները՝ ներառյալ մարդածին ջերմոցային գազերի արտանետումների գնահատման և հաշվառման, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, վերացման համար:

Ըստ Շրջակա միջավայրի նախարարության³⁹ կողմից ներկայացված տեղեկատվության, ազգային կադաստրների և ազգային հաղորդագրությունների ու երկամյա զեկույցների պարբերական մշակումն ապահովելու համար դիմվել է դոնոր կազմակերպություններին ֆինանսական միջոցներ հայթայթելու նպատակով: Ազգային հաղորդագրությունների ու երկամյա զեկույցների պարբերական զարգացման որակի բարելավման և հնարավոր փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ որոշումը կարող է կայացվել համապատասխան ուսումնասիրության արդյունքների հիման վրա:

Հաշվետվություններ ներկայացնելը. 2003/87/ԵՀ հրահանգի 4-րդ հավելվածը սահմանում է անշարժ կառուցվածքներից արտանետումների մոնիթորինգի իրականացման և հաշվետվություններ ներկայացնելու սկզբունքները: Սահմանված է, որ արտանետումները մոնիթորինգի են ենթարկվում կամ հաշվարկի միջոցով կամ չափումների հիման վրա: Արտանետումների հաշվարկը իրականացվում է հետևյալ բանաձևով՝ գործունեության տվյալներ $\times$ արտանետման գործակից $\times$ օքսիդացման գործակից, գործունեության տվյալները (օգտագործված վառելիքը, արտադրության ծավալը և այլն) ենթարկվում են մոնիթորինգի՝ մատակարարման վերաբերյալ տվյալների կամ չափումների հիման վրա: Կիրառվում են արտանետումների ընդունված գործակիցներ: Արտանետումների՝ ըստ գործունեության տեսակների ցուցիչներն ընդունելի են բոլոր տեսակի վառելիքների համար: Գործունեության յուրաքանչյուր տեսակի, կառուցվածքի և վառելիքի համար իրականացվում

³⁹ Հետազոտության շրջանակներում Շրջակա միջավայրի նախարարություն ներկայացվել է հարցաշար, որը կցվում է հետազոտության Հավելված 1-ում:

է առանձին հաշվարկ: Արտանետումների չափումներ իրականացնելիս օգտագործվում են ստանդարտացված կամ ընդունված մեթոդներ, և չափումներն ամրապնդվում են այդ չափումների հավաստիությունը հաստատող արտանետումների հաշվարկով:

Հաշվետվություն ներկայացնելիս պարտադիր տվյալները. Կարևոր է արտանետումների մասին հաշվետվություններ ներկայացնելիս պահպանել հետևյալ տվյալները.

- կառուցվածքի անվանումը, դրա հասցեն, ներառյալ՝ փոստային ինդեքսն ու երկիրը,
- Հավելված I-ում նշված այն գործողությունների տեսակը և թիվը, որոնք իրականացվում են տվյալ կառուցվածքում,
- կոնտակտային անձի հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսն ու էլեկտրոնային փոստի տվյալները, և կառուցվածքի սեփականատիրոջ անունը և մայր ընկերության անվանումը:
- Արտանետող գործունեության տեսակներից յուրաքանչյուրի համար գործունեության տեսակի վերաբերյալ տվյալները, արտանետումների գործակիցը, օքսիդացման գործակիցը, ընդհանուր արտանետումները, և անորոշություն պարունակող հանգամանքները:

Պետությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ պահանջներն արդեն իսկ գոյություն ունեցող այդպիսի պահանջների հետ համակարգելու համար, որպեսզի հնարավորինս թեթևացնեն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների վրա դրված՝ հաշվետվություն ներկայացնելու բեռը:

Հաշվետվությունների վերահաստատում. 600/2012 կանոնակարգով սահմանվում են դրույթներ՝ 2003/87/ԵՀ հրահանգի համաձայն ներկայացված հաշվետվությունների հավաստագրման, ինչպես նաև հավաստագրողների հավատարմագրման և վերահսկման հետ կապված: Այս գործընթացներն իրականացնելու համար, նախ անհրաժեշտ է իրավական հիմք ապահովել հետևյալ հասկացությունների համար՝

- «հայտնաբերման ռիսկ» նշանակում է այն ռիսկը, որ հավաստագրողը չի հայտնաբերում որևէ էական շեղում,
- «հավատարմագրում» նշանակում է հավատարմագրման ազգային մարմնի կողմից հավաստում այն մասին, որ հավաստագրողը բավարարում է ներդաշնակեցված ստանդարտներով սահմանված պահանջները,
- «վերահաստատող», «վերահաստատում» նշանակում է վերահաստատողի կողմից վերահաստատման հաշվետվություն ներկայացնելու համար իրականացվող գործողություններ,
- «էական շեղում» նշանակում է շեղում, որը, համաձայն հավաստագրողի եզրակացության, առանձին կամ այլ շեղումների հետ միասին գերազանցում է էականության մակարդակը կամ կարող է ազդել իրավասու մարմնի կողմից շահագործողի կամ օդանավ շահագործողի հաշվետվության ուսումնասիրման վրա,

- «շահագործողի կամ օդանավ շահագործողի հաշվետվություն» նշանակում է տարեկան արտանետումների հաշվետվությունը, որը պետք է ներկայացվի շահագործողի կամ օդանավ շահագործողի կողմից՝ համաձայն 2003/87/ԵՀ հրահանգի 14(3) հոդվածի, կամ տոննա-կիլոմետրի մասին հաշվետվություն, որը պետք է ներկայացվի օդանավ շահագործողի կողմից՝ այդ հրահանգի 3(ե) և 3(զ) հոդվածների համաձայն՝ արտոնագրերի հատկացման համար դիմելու նպատակներով,
- «հավատարմագրման ոլորտ» նշանակում է I հավելվածում նշված այն գործողությունները, որոնց համար հավատարմագրման հարցում է կատարվում, կամ արդեն հավատարմագրում է շնորհվել,
- «հսկողության համակարգ» նշանակում է շահագործողի կամ օդանավ շահագործողի ռիսկերի գնահատումը և հսկողության գործողությունների ամբողջությունը, ներառյալ դրանց շարունակական կառավարումը, որոնք շահագործողը կամ օդանավ շահագործողը սահմանել, փաստաթղթավորել, իրականացրել և պահպանել է՝ համաձայն թիվ 601/2012 կանոնակարգի (ԵՄ) 58-րդ հոդվածի,
- «հսկողությանն առնչվող գործողություններ» նշանակում է ցանկացած գործողություն կամ միջոցառում, որն իրականացվում է շահագործողի կամ օդանավ շահագործողի կողմից՝ ներհատուկ ռիսկերը մեղմելու նպատակով,
- «անհամապատասխանություն», «հսկողության միջավայր» նշանակում է այն միջավայրը, որում գործում է ներքին հսկողության համակարգը, ինչպես նաև շահագործողի կամ օդանավ շահագործողի կառավարման ընդհանուր գործողությունները ներքին հսկողության այս համակարգի մասին իրազեկությունն ապահովելու ուղղությամբ,
- «ներհատուկ ռիսկ» նշանակում է շահագործողի կամ օդանավ շահագործողի հաշվետվությունում որևէ պարամետրի հետ կապված այն շեղումների առաջացումը, որոնք նախքան որևէ առնչվող հսկողության գործողության ազդեցության հաշվառումը կարող են էական լինել՝ առանձին վերցրած կամ այլ խեղաթյուրումների հետ միասին,
- «հսկողության ռիսկ» նշանակում է շահագործողի կամ օդանավ շահագործողի հաշվետվությունում որևէ պարամետրի հետ կապված այն շեղումների առաջացումը, որոնք կարող են էական լինել՝ առանձին վերցրած կամ այլ շեղումների հետ միասին, և որոնք ժամանակին չեն կանխվի կամ չեն հայտնաբերվի և շտկվի հսկողության համակարգի կողմից,
- «վերահաստատման ռիսկ» նշանակում է այն ռիսկը, որը, հանդիսանալով ներհատուկ ռիսկի, հսկողության ռիսկի և հայտնաբերման ռիսկի գործառույթ, հավաստագրողը կրում է՝ հայտնելով ոչ պատշաճ վերահաստատման եզրակացություն այն դեպքում, երբ շահագործողի կամ օդանավ շահագործողի հաշվետվությունը զերծ չէ էական խեղաթյուրումներից,
- «ողջամիտ հավաստիացում» նշանակում է շահագործողի կամ օդանավ շահագործողի՝ վերահաստատման ենթակա հաշվետվության էական շեղումներից

զերծ լինելու մասին վերահաստատման եզրակացության մեջ հավաստիացման դրական արտահայտված բարձր, բայց ոչ բացարձակ մակարդակ,

- «վերլուծական ընթացակարգեր» նշանակում է տվյալներում փոփոխությունների և դրանց տենդենցների վերլուծությունը, ներառյալ այն փոխկապվածությունների վերլուծությունը, որոնք չեն համապատասխանում այլ վերաբերելի տեղեկատվությանը կամ շեղվում են կանխատեսված քանակից
- «շեղում» նշանակում է շահագործողի կամ օդանավ շահագործողի հաղորդած տվյալների բացթողում, սխալ ներկայացում կամ սխալ:

Միջոցառում 4 (123) Հիմնականում կապարված

ՀՀ պարտավորությունը – մինչև 2026 թվականի առաջին եռամսյակը մոտարկել ազգային օրենսդրությունն Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 525/2013 կանոնակարգին:

Այս միջոցառմամբ ՀՀ-ն պարտավորվել է ապահովել Չափողական, հաշվետվայնության ու հավաստագրման (ՉՀՀ/ MRV) համակարգի ստեղծումը, կլիմայի փոփոխության խնդիրների լուծմանն ուղղված տեխնոլոգիաների զարգացման և փոխանցման գործընթացի ձևավորումն ու հետևողական ամրապնդումը Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 525/2013 կանոնակարգի համաձայն:

Տարբեր երկրներ ՉՀՀ համակարգի ներդրման հետ կապված որդեգրել են տարբեր իրավական լուծումներ. Մի մասը ընդունել են առանձին օրենքներ ՉՀՀ համակարգի վերաբերյալ, իսկ մյուս մասը՝ ՉՀՀ համակարգի ներդրումն իրականացնում է միջազգային պարտավորությունների շրջանակում: Տարածաշրջանային համադրելի երկրները հիմնականում ՉՀՀ համակարգի ներդրմանն ուղղությամբ որդեգրել են հետևյալ լուծումները.

Աղյուսակ 3. 525/2013 կանոնակարգի մոտարկման միջազգային պրակտիկա

Երկիր	Ընդունված նորմատիվ իրավական ակտ
Մոլդովա	Նախատեսել իրավական հիմքեր՝ կապված շարժական հիմքերից ՉՀՀ ստեղծելու վերաբերյալ, արդյունաբերական արտանետումների վերաբերյալ, մոնիտորինգային գործընթացների մանրամասների սահմանման, տարեկան հաշվետվությունների ներկայացման և դրանց Մոլդովայի ազգային հավաստագրման կենտրոնի կողմից հավաստագրման գործընթացի հետ կապված
Վրաստան	Առանձին ազգային նորմատիվ հիմք առկա չէ և բոլոր գործընթացները հիմնվում են Վրաստանի կողմից վավերացված միջազգային պարտավորությունների շրջանակում ադ հոբ հիմքի վրա ⁴⁰ :

Միջգերատեսչական համակարգող խորհուրդ. Հայաստանը, որպես ՄԱԿ ԿՓԾԿ Հավելված I-ի Կողմ չհանդիսացող երկիր արդեն իսկ հաստատել է ՉՀՀ-ի հիմնարար ազգային համակարգը՝ թափանցիկության առկա կառուցվածքի ներքո: Նշանակվել է պաշտոնական համակարգող մարմին (ՇՄՆ), ինչպես նաև գործընթացում ներգրավվել են այլ

⁴⁰ <https://www.undp.org/georgia/publications/eu4climate-lulucf-mrv-framework>

հաստատություններ և ստեղծվել միջգերատեսչական հորիզոնական համակարգման մեխանիզմ⁴¹: ՄԱԿի ԿՓՇԿ պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգող խորհուրդը ձևավորվել ու գործում էր ՀՀ վարչապետի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի 955-Ա որոշմամբ, այնուամենայնիվ լիազորությունների շրջանակը համահունչ չէր դրված նպատակների ու խնդիրների իրականացման համար: 06.07.2021 թվականին ՀՀ վարչապետի՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհուրդ ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու և ՀՀ վարչապետի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 955-ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 719-Ա վարչապետի որոշմամբ⁴² վերանայվել է միջգերատեսչական խորհրդի լիազորությունների շրջանակը: Ի թիվս այլոց, լիազորությունների շրջանակում ներառվել են նաև Շրջանակային կոնվենցիայից և Փարիզյան համաձայնագրից բխող՝ ՀՀ պարտավորությունների կատարման միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը և խորհրդատվություն տրամադրելը՝ ներառյալ կլիմայի փոփոխության ոլորտում նորարարական ֆինանսական գործիքների մշակման վերաբերյալ, կոնվենցիայից և Փարիզյան համաձայնագրից բխող՝ ՀՀ ստանձնած պարտավորությունների և դրույթների կատարման գործընթացի և արդյունքների գնահատումը, ինչպես նաև Շրջանակային կոնվենցիայի ներքո ՀՀ ազգային մակարդակով սահմանված գործողություններից բխող կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ազգային գործընթացների համակարգումը և հսկողությունը: Թերևս միջգերատեսչական համակարգող խորհրդի կարգավիճակի ու լիազորությունների հստակեցումն ու ընդլայնումն էական առաջընթաց է ԿՓ համակարգման բնույթի աշխատանքների տեսանկյունից, այնուամենայնիվ խորհրդի վրա պետք է դրվի նաև ՀԸԳՀ բխող միջոցառումների իրականացման համակարգման լիազորությունը, հստակեցվի հսկողության իրականացման հիմքերը, նեղ մասնագիտացմանն ուղղված շարունակական վերապատրաստումների հնարավորություն ընձեռվի և այլն: Նախատեսվում է խորհրդի կարգավիճակը նախատեսել Կլիմայի մասին օրենքով, որն էլ էապես կփոխի խորհրդի դերն ու գործառույթների իրականացումը:

ՉՀՀ համակարգի ինստիտուցիոնալիզացման իրավական հիմքերը. ՉՀՀ համակարգի ինստիտուցիոնալացման⁴³ իրավական հիմքերի ստեղծման տեսանկյունից կարևոր

⁴¹ Հայաստանի Հանրապետությունում իրավական դաշտի առկա բացերի վերլուծություն և ԵՄ կլիմայական կարգավորիչ դաշտի հետ մոտարկման ճանապարհային քարտեզ Եվրոպական Միության հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի համաձայն: Վերջնական զեկույց: Սվետլանա Ժեկովա, 2021թ.:

⁴² <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154215>

⁴³ Ծրագրային կոմպոնենտի շրջանակներում /«ԵՄ-ն կլիմայի համար»/ ծրագրի շրջանակներում/ մշակվել է հայաստանում տեղակայման մակարդակով ԶԳ արտանետումների չափումների, հաշվետվայնության և հավաստագրման (ՉՀՀ) ճանապարհային քարտեզ, որով նախատեսվում են ՀԸԳՀ ԱԱՀ-ի գծով պարտավորությունների կատարման քայլերը: Այդ գործընթացում Հայաստանը պետք է սահմանի բոլոր շահագրգիռ կողմերի, ներառյալ արդյունաբերական տեղակայանքների շահագործողների, լիազոր մարմնի, հավաստագրողների և բնապահպանական տեսչական մարմինների դերերի և պարտականությունների շրջանակը: Համապատասխան տեղակայանքների և գազերի նույնականացման համակարգի ստեղծումը կնպաստի

փաստաթուղթ է՝ Կլիմայի մասին օրենքի հայեցակարգային առաջարկության մշակումը, որտեղ հստակեցվել են ՉՀՀ համակարգի հիմնադրման ուղղությամբ հիմքերը⁴⁴: Մասնավորապես, ՉՀՀ ստեղծման պահանջը նախատեսված է ՓՀ 13-րդ հոդվածով: Այն հնարավորություն է տալու համապատասխան տվյալների հավաքագրման ու վերլուծության միջոցով ապահովել ՄԱԿ-ի ԿՓՇԿ և ՓՀ ներքո երկրի ստանձնած պարտավորությունների իրականացման մոնիթորինգի իրականացումը, պատրաստել միջազգային հաշվետվությունները, ինչպես նաև օգտագործել հավաքագրված տվյալները երկրի կլիմայական քաղաքականության մշակման և իրականացման նպատակով: ՉՀՀ համակարգը հնարավորություն է տալու հաշվառել նաև մեղման քաղաքականության և գործողությունների արդյունքները, ինչպես նաև ստացված աջակցությունը:

ՉՀՀ համակարգի ստեղծումը նախատեսված է ինչպես ԵՄ-ՀՀ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով, այնպես էլ ՀՀ կառավարության 2021թ.-ի նոյեմբերի 18-ին N 1902-Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության 2021-2026թթ. Գործունեության միջոցառումների ծրագրով՝ որպես «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի թափանցիկության ազգային շրջանակի կառուցում:

ՉՀՀ համակարգը ԿՓ ոլորտում պետության կողմից պատրաստվող բոլոր տեսակի հաշվետվությունների մշակումն ապահովող գործիք է, որը հնարավորություն է տալիս հետևել երկրի սահմանած թիրախներին հասնելու առաջընթացին, և ներառում է տարբեր թեմատիկ հաշվետվայնության համակարգեր.

- ԶԳ արտանետումների/ կլանումների գույքագրում/կադաստր.
- ԿՓ մեղմման քաղաքականությունների և գործողությունների վերաբերյալ տվյալների շտեմարան.
- ԿՓ նկատմամբ խոցելիությունների ու հարմարվողականության տվյալների շտեմարան.
- ԿՓ դիմակայման համար ստացված ֆինանսական աջակցության վերաբերյալ տվյալների շտեմարան:

ՉՀՀ համակարգը պետական մարմիններից ու մասնավոր կազմակերպություններից ստացվող տվյալների շարունակական հավաքագրման ու վերլուծության համակարգ է, ինչը ենթադրում է մեծածավալ տվյալների հասանելիություն, դրանց օգտագործման, օգտագործման նպատակների, գաղտնիության իրավական կարգավորում: Հետևաբար, առանցքային նշանակություն ունի ՉՀՀ համակարգում ներառվող տվյալներին առնչվող բոլոր պետական մարմինների լիազորությունների ամրագրումը՝ հաշվի առնելով տվյալներ տրամադրողների, հավաքագրողի, համակարգի օպերատորի ու օգտագործողների

ԱԱՀ դիրեկտիվի ներքո ՉՀՀ-ի ենթակա արդյունաբերական տեղակայանքների առանձնացմանը, ինչպես նաև՝ ՉՀՀ ընթացակարգերի ներդրմանը:

⁴⁴ Կլիմայական քաղաքականության մասին հայեցակարգային առաջարկություն, 2023թ.:

իրավունքների ու պարտականությունների ծավալը և սահմանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության գաղտնիության ապահովման կանոններ:

Գործուն ՉՀՀ համակարգի ստեղծման կարևորագույն նախապայմաններից է իրավական հիմքի ապահովումը, որն կընդգրկի անկախ փորձագիտական մեխանիզմի, ՈԱ/ՈՎ մեխանիզմի, տվյալների հավաքագրման մեխանիզմի կատերալոգարման հիմքերը⁴⁵: Այս նպատակներին են ուղղված Կլիմայի մասին ընդունվելիք օրենքը, ինչպես նաև մշակվող ենթաօրենսդրական ակտերը:

Ըստ ՇՄՆ ներկայացրած տեղեկատվության, մշակման փուլում է «Փարիզի համաձայնագրի ներքո Հայաստանի թափանցիկության ազգային շրջանակի կառուցում» ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի շրջանակներում տվյալների շարունակական հավաքագրման համակարգի ստեղծումը և տվյալների ցանկի և հավաքագրման կարգի վերաբերյալ Կառավարության որոշման նախագծի մշակումը:

Միջոցառում 5. (124) - Հիմնականում կապարված



ՀՀ պարտավորությունը – մինչև 2024 թվականի առաջին եռամսյակը մոտարկել ազգային օրենսդրությունն թիվ 517/2014 ԵՄ կանոնակարգին:

Այս միջոցառմամբ ՀՀ-ն պարտավորվել է ապահովել օգոնային շերտը քայքայող նյութերի՝ հիդրոքլորֆտորածխածինների և դրանց փոխարինողների՝ հիդրոֆտորածխածինների փոխարինմանն ուղղված միջոցառումների իրականացումը 517/2014 ԵՄ կանոնակարգի համաձայն:

517/2014 (ԵՄ) Կանոնակարգն ուղղված է ֆտոր պարունակող ՋԳ արտանետումների ծավալի նվազեցմանը, որը հնարավոր է իրականացնել ֆտոր պարունակող ջերմոցային գազերի զսպման, օգտագործման, օգտահանման և կազմալուծման, ինչպես նաև հարակից օժանդակ միջոցառումների վերաբերյալ կանոններ սահմանելով, ինչպես նաև պայմաններ սահմանելով՝ կապված որոշակի այնպիսի արտադրատեսակների ու սարքավորումների շուկայահանման առնչությամբ, որոնք պարունակում կամ որոնց գործարկումը կախված է ֆտոր պարունակող ջերմոցային գազերից, ֆտոր պարունակող ջերմոցային գազերի որոշակի կիրառությունների համար պայմաններ սահմանելով և հիդրոֆտորածխածինների շուկայահանման քանակական սահմանաչափեր նախատեսելով: Կանոնակարգի երկրորդ հոդվածով ամրագրված են սահմանումներ, որոնք ենթակա են մոտարկման ներպետական օրենսդրության մակարդակով: Կանոնակարգով նաև ամրագրված են զսպման միջոցները, որոնք հատկապես վերաբերում են ֆտոր պարունակող ջերմոցային գազերի

⁴⁵ Հայաստանում ջերմոցային գազերի արտանետումների ազգային կադաստրի գործառնական համակարգի և Չափումների, հաշվետվայնության և հավաստագրման համակարգի մշակման ճանապարհային քարտեզ, ամփոփիչ զեկույց: Մարիա Պուրցներ, 2022թ.:

արտանետումների կանխարգելմանը, արտահոսքի ստուգումներին և տվյալների պահպանմանը⁴⁶:

Այս պարտավորությունները համահունչ են ՀՀ կողմից «Օզոնի շերտի պաշտպանության մասին» Վիեննայի կոնվենցիայով և «Օզոնի շերտը քայքայող նյութերից օզոնային շերտի պահպանության մասին» Մոնրեալի արձանագրությամբ ստանձնած պարտավորությունների բնույթին:

Համաձայնագիրն ընդգրկում է ավելի քան 200 անհատական ՕՔՆ դադարեցում, և վերահսկում է այդ նյութերի սպառումը և արտադրությունը, ոչ թե դրանց արտանետումները: Այն աստիճանաբար դուրս է մղում դրանց սպառումը և արտադրությունը տարբեր ժամանակացույցերով՝ զարգացած և զարգացող երկրների համար: Պայմանագրի համաձայն, բոլոր կողմերն ունեն հատուկ պարտականություններ՝ կապված ՕՔՆ-ի տարբեր խմբերի փուլային արգելման, նրանց առևտրի վերահսկման, տվյալների տարեկան զեկուցման և լիցենզավորման ազգային համակարգերի հետ՝ ՕՔՆ ներմուծումն ու արտահանումը վերահսկելու համար:

Սույն միջոցառման շրջանակներում դիտարկվող կանոնակարգի մոտարկման նպատակով միջազգային փորձագետի կողմից իրականացվել է հետազոտություն՝ կապված ՀՀ-ում իրավական դաշտի առկա բացերի վերլուծության և ԵՄ կլիմայական կարգավորիչ դաշտի հետ ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի հետ⁴⁷: Հետազոտության մեջ կոնկրետացվել են ճանապարհային քարտեզի՝ ՕՔՆ վերաբերյալ մոտարկման ենթակա միջոցառումների հետ կապված գործողությունները, մասնավորապես.

- Վերահսկվող նյութերի հաշվետվության և տվյալների մշակման ընթացակարգերի մոնիթորինգի և ստուգման ընթացակարգեր
- Իրավասու մարմինների և ընկերությունների անձնակազմի կանոնավոր վերապատրաստում, ինչպես նաև Մոնրեալի արձանագրության և ԵՄ համապատասխան օրենսդրության հետ մոտարկման ազգային օրենսդրության իրազեկման բարձրացման քարոզարշավներ
- Շրջանակային օրենքում կատարված փոփոխությունները և ՀՖԱ-ների ցուցակի ընդունումից հետո անհրաժեշտ է մշակել ճանապարհային քարտեզ՝ F-գազերի կանոնակարգի հատուկ դրույթները մոտարկելու համար՝ համապատասխան կատարողական ակտերի մշակմամբ: Այդ նպատակով պետք է նախնական գնահատումներ իրականացվեն՝ պարզելու համար F-գազերի քանակները, որոնք մշակվում են Հայաստանում F-գազերի գործունեության մեջ ներգրավված

⁴⁶ Էվրոպական պառլամենտի եւ խորհրդի 2014 թվականի ապրիլի 16-ի թիվ 517/2014 (ԵՄ) կանոնակարգ Ֆտոր պարունակող ջերմոցային գազերի եւ թիվ 842/2006 (ԵՀ) կանոնակարգն ուժը կորցրած ճանաչելու մասին:

⁴⁷ Ս.Ժեկովա: Հայաստանի Հանրապետությունում իրավական դաշտի առկա բացերի վերլուծություն և ԵՄ կլիմայական կարգավորիչ դաշտի հետ մոտարկման ճանապարհային քարտեզ Եվրոպական Միության հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի համաձայն, 2021թ.:

ընկերությունների, ինչպես նաև ԵՄ կանոնակարգում ընդգրկված ոլորտների կողմից:

Միջոցառման կատարման նպատակով նաև 2020-ի մայիսի 26-ին «Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ և ընդունվել են ենթաօրենսդրական ակտեր: Նշված Օրենքում կատարված փոփոխությունները հետևյալն են.

- ընդլայնվել է օրենքի կարգավորման առարկան՝ ներառելով նաև քայքայող նյութերին այլընտրանք հանդիսացող ջերմոցային գազերի՝ հիդրոֆտորածխածինների⁴⁸՝ ՀՀ-ում արտադրության, ներմուծման, արտահանման և տարանցիկ տեղափոխման նկատմամբ սահմանափակումները և դրանց հետ կապված հարաբերությունները.
- Օրենքով տրվել է հիդրոֆտորածխածինների սահմանումը, համաձայն որի վերջիններս՝ ջերմոցային գազեր են, որոնք չեն հանդիսանում օգոնային շերտը քայքայող նյութեր և չունեն օգոնաքայքայիչ ներուժ:

Համաձայն 517/2014 (ԵՄ) Կանոնակարգի երկրորդ հոդվածի, «հիդրոֆտորածխածիններ» կամ «ՀՖԱ-ներ» նշանակում է I հավելվածի 1-ին բաժնում ներկայացված նյութերը կամ այդ նյութերից որևէ մեկը պարունակող խառնուրդները:

Օրենքում կատարված փոփոխություններն ըստ էության համահունչ են ՀԸԳՀ ՃԲ-ում օգոն քայքայող նյութերի հետ կապված միջոցառումների ընդհանուր նպատակին, քանի որ ճանապարհային քարտեզով նախատեսվում է ՕԲԲ և դրանց այլընտրանքների շրջանակի ընդլայնում՝ ֆտորացված ջերմոցային գազերի, ինչպես նաև ՀՖԱ-ների վերաբերյալ դրույթներ ներառելու հետ կապված: ՀՖԱ-ների ցուցակը հաստատվել է Կառավարության 2020-ի օգոստոսի 20-ին ընդունված թիվ 1368-Ն⁴⁹ որոշման միջոցով:

Անդրադառնալով այլ պետությունների սույն Կանոնակարգի մոտարկման պրակտիկային, հարկ է նշել, որ ԵՄ այս հրահանգների տեղայնացումը չի իրականացվել *silos mode*, այսինքն չի համակցվել հատկապես օդի պահպանության վերաբերյալ ԵՄ համահունչ դիրեկտիվի հետ:

Միջոցառում 6. (125) - Հիմնականում կապարված



ՀՀ պարտավորությունը – մինչև 2024 թվականի առաջին եռամսյակը մոտարկել ազգային օրենսդրությունը թիվ 1005/2009 ԵՄ կանոնակարգին:

Այս միջոցառմամբ ՀՀ-ն պարտավորվել է ապահովել օգոնային շերտը քայքայող նյութերի և դրանց փոխարինողների գործածումը կարգավորող մի շարք ենթաօրենսդրական ակտերի լրամշակումը՝ ներառելով ֆտորացված ջերմոցային գազերի վերաբերյալ կարգավորումները՝ 1005/2009 կանոնակարգի համաձայն (Օգոնային շերտը քայքայող նյութերի բնագավառում

⁴⁸ Հիդրոֆտորածխածինները (ՀՖԱ-ներ) կլիմայի տեսանկյունից համարվում են ամենավերաբերելի F-գազերի խումբը:

⁴⁹ Հայերենով. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=106829>

միջոցառումների իրականացման լիազոր մարմինը՝ Շրջակա միջավայրի նախարարությունն է⁵⁰):

Սույն միջոցառման կատարման նպատակով փոփոխություններ են կատարվել հետևյալ իրավական ակտերում.

- «Օզոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքում
- Հարկային օրենսգրքում⁵¹ /կապված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական հարկի դրույքաչափերի հետ/
- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ⁵²:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն օզոնային շերտը քայքայող նյութերի՝ սառնարանագետների հոսակորուստների դիտանցման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները պետական լիազոր մարմին չներկայացնելը և օզոնային շերտը քայքայող նյութերի՝ սառնարանագետների հոսակորուստների հայտնաբերումից հետո 14 օրվա ընթացքում դրանց չվերացնելը առաջացնում է տուգանքի նշանակում⁵³:

Նախորդ միջոցառման շրջանակներում ներկայացվել են շրջանակային օրենքում կատարված հիմնական փոփոխությունները: Հարկ է նշել, որ «Օզոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքից բխող փոփոխությունները տեղ են գտել հետևյալ ենթաօրենսդրական ակտերում.

- Կարգավորվող նյութերի ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին հաշվետվության հաշվառման կարգը (ՀՀ կառավարության թիվ 1761-Ն որոշում, 28 հոկտեմբերի 2021 թվական)
- Օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանելու մասին Կառավարության թիվ 754 որոշում (13.05.2021թ.)
- Հիդրոֆտորածխածինների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության թիվ 1368-Ն որոշումը (20 օգոստոսի 2020 թվական)
- Օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների առաքման թույլտվության էլեկտրոնային եղանակով տրամադրման կարգը սահմանելու մասին կառավարության թիվ 1304 որոշումը (12. 08.2021թ.)

⁵⁰ Օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների գործածման բնագավառում լիազոր պետական մարմին ճանաչելու մասին 15 մարտի 2007 թվականի կառավարության թիվ 291-Ն որոշում: <https://drive.google.com/file/d/11cDrWneQOuaBOsN8HL0SoaoEZEhKTb40/view>

⁵¹ Հարկային օրենսգիրք, 171 հոդված: <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150068>

⁵² <https://www.e-draft.am/projects/4090/about>

⁵³ Որոշ երկրներում նախատեսվում է քրեական պատասխանատվություն. Մոնտենեգրո և այլն:

Ի կատարումն, «Օգոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի ընդունվել է «Կարգավորվող նյութերի ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին հաշվետվության հաշվառման կարգը հաստատելու մասին» 2021 թվականի հոկտեմբերի 28-ի ՀՀ կառավարության թիվ 1761-Ն որոշումը: Այս որոշմամբ հաստատվել է օգոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին հաշվետվության հաշվառման կարգը և ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Օգոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների հաշվառման կարգը հաստատելու մասին» N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 5-րդ կետի 5-րդ ենթակետը:

Հարկ է նշել, որ սույն միջոցառման հիմք հանդիսացող 2009 թ. սեպտեմբերի 16-ի թիվ 1005/2009 կանոնակարգի մոտարկման համար հստակ հոդված նշված չէ: Քննարկվող կառավարության որոշման մեջ առկա չեն ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին հաշվետվության կարգի հաստատման հետ կապված որոշ իրավակարգավորումներ: Անհրաժեշտ է, հաշվի առնելով սահմանումների կարևորությունը, նախատեսել «կարգավորվող նյութեր», «ներմուծում», Կանոնակարգի իմաստով «տնտեսավարող սուբյեկտ», «ելակետային նյութեր», «ապրանքներ և սարքավորումներ» հասկացությունները՝ հիմք ընդունելով 1005/2009 կանոնակարգի երրորդ հոդվածում նախատեսված սահմանումները:

Թե քննարկվող օրենքը, թե ենթաօրենսդրական ակտերը չեն մանրամասնում թիվ 1005/2009 կանոնակարգով ամրագրված տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացվող հաշվետվությունների բովանդակային պահանջները, համաձայն որի, յուրաքանչյուր ներմուծող յուրաքանչյուր նյութի համար պետք է ներկայացնի հետևյալ տվյալները՝ ազատ շրջանառության համար բաց թողնված քանակությունները՝ առանձին ներկայացնելով որպես արդյունաբերական հումք և գործընթացի ազդանյութ կիրառության համար: Այն ներմուծողները, որոնք ներմուծել են ոչնչացման համար կարգավորվող նյութեր, ներկայացնում են նաև յուրաքանչյուր նյութի իրական վերջնական նշանակման վայրը կամ վայրերը՝ յուրաքանչյուր նշանակման վայրի համար առանձնացնելով յուրաքանչյուր նյութի քանակությունը և ոչնչացման վայրի անվանումը և հասցեն, ուր հասել է նյութը; մաքսային այլ ընթացակարգերով ներմուծված քանակությունները՝ առանձին ներկայացնելով մաքսային ընթացակարգը և նախատեսված կիրառությունները; օգտահանման համար ներմուծված օգտագործվող նյութերի քանակությունները, պաշարները, արտահանող երկիրը:

Կարևոր իրավակարգավորում է նախատեսվել քննարկվող Կառավարության որոշմամբ, համաձայն որի տնտեսավարող սուբյեկտի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հաշվառման ենթակա հաշվետվությունը չներկայացնելու դեպքում՝ լիազոր պետական մարմինն այդ մասին ծանուցում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին՝ օրենքով վերապահված իրավասությունների շրջանակներում անհրաժեշտ գործառույթներ իրականացնելու համար: Այս իրավակարգավորումը համապատասխանում է 1005/2009 կանոնակարգի Հոդված 29-

որդ հոդվածի ընդհանուր կոնցեպտին, պարզապես անհրաժեշտ է ելնել այն սկզբունքից, որ պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ:

Սահմանվել են նաև օգոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման ընդհանուր չափաքանակները (քվոտաները)⁵⁴ 13.05.2021թ. ՀՀ Կառավարության թիվ 754 որոշմամբ: Հարկ է նշել, որ օգոնային շերտը քայքայող նյութերի՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման թույլատրելի ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանվում են ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման NN 1 և 5 հավելվածներին համապատասխան խմբերի և ըստ տարիների, իսկ հիդրոֆտորածխածինների՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման թույլատրելի ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանվում են ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 20-ի N 1368-Ն որոշման հավելվածին համապատասխան խմբերի և ըստ տարիների: Թիվ 754 որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշումը:

Ի կատարումն սույն միջազգային 2020 թվականի օգոստոսի 20-ի ՀՀ կառավարության թիվ 1368-Ն որոշմամբ հաստատվել է հիդրոֆտորածխածինների ցանկը:

Սույն միջազգային կատարմանն ուղղված կարևոր քայլ է Օգոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների առաքման թույլտվության էլեկտրոնային եղանակով տրամադրման կարգը սահմանելու մասին կառավարության թիվ 1304 որոշման ընդունումը (12. 08.2021թ.): Միջազգային հետազոտություններից մեկում ընդգծվել է ՕՔՆ և F-գազերի էլեկտրոնային լիցենզավորման համակարգի կարևորությունը՝ կապված էլեկտրոնային լիցենզավորման և տեղեկատվության հավաքագրման հետ, որը հնարավորություն կտա ավտոմատ կարգով ստեղծել զեկույցներ: Կառավարության որոշմամբ կարգավորվում են օգոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների առաքման՝ ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման թույլտվության էլեկտրոնային եղանակով տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Բացի իրավական ակտերի ընդունումից, գործարկվել է նաև էլեկտրոնային մեկ պատուհան հարթակը, որտեղ հնարավոր է ծանոթանալ ՀՀ ՕՔՆ ներմուծման անհատական չափաքանակի տրամադրման մասին հայտի օրինակին, ՕՔՆ/ՀՖԱ ներմուծման/արտահանման լիցենզիայի տրամադրման հայտի օրինակին, լիցենզիայի տրամադրման դիմումի ձևի, ՕՔՆ/ՀՖԱ պարունակող արտադրանքի, ՀՖԱ տեղափոխման թույլտվության տրամադրման հայտերի հետ, որոնք գործում են ՀՀ արտաքին առևտրի՝ ապրանքների ներմուծման, տարանցման և արտահանման թույլատվական փաստաթղթերի տրամադրման ազգային մեկ պատուհանի շրջանակներում⁵⁴, ինչպես նաև միջազգայիններ՝ ուղղված ՀՖԱ բազմոլորտ միջազգայինների ծրագրային փաստաթղթերի մշակմանը:

⁵⁴ <https://sw.gov.am/hy/login>



ՀՀ պարտավորությունը – մինչև 2024 թվականի առաջին եռամսյակը մոտարկել ազգային օրենսդրությունն ԵՄ 517/2014 կանոնակարգին:

Այս միջոցառմամբ ՀՀ պարտավորվել է ապահովել ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման /փուլային կրճատմամբ/ ազգային ծրագրի մշակումը, ինչպես նաև ծրագրից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի լրամշակումը և միջոցառումների ծրագրի մշակումը 517/2014 կանոնակարգի համաձայն:

Ինչպես արդեն նշվել է մոտարկվող Կանոնակարգով նաև ամրագրված են զսպման միջոցները, որոնք հատկապես վերաբերում են Ֆտոր պարունակող ջերմոցային գազերի արտանետումների կանխարգելմանը, մասնավորապես, ֆտոր պարունակող ջերմոցային գազերի դիտավորությամբ մթնոլորտ բաց թողնելու արգելքին, եթե բացթողումը նախատեսված օգտագործման համար տեխնիկապես անհրաժեշտ չէ, կամ ֆտոր պարունակող ջերմոցային գազեր պարունակող սարքավորումներ շահագործող անձանց կողմից նախագգուշական միջոցների ձեռնարկումը՝ այդ գազերի չնախատեսված բացթողումը (արտահոսքը) կանխելու նպատակով է, կամ տեխնիկապես և տնտեսապես հնարավոր բոլոր միջոցների ձեռնարկումը՝ ֆտոր պարունակող ջերմոցային գազերի արտահոսքը նվազագույնի հասցնելու համար կամ շահագործող անձանց կողմից ֆտոր պարունակող ջերմոցային գազերի արտահոսք հայտնաբերելու դեպքում սարքավորումների վերանորոգման ապահովումն է՝ առանց անհարկի ուշացման: Կանոնակարգով սահմանվում են նաև արտահոսքի ստուգման մեխանիզմը և տվյալների պահպանումը և այլն:

Ինչ վերաբերում է արտահոսքի ստուգումներին, ապա հետևյալ դեպքերում սարքավորումներ շահագործող անձինք պետք է իրականացնեն ներքոնշված քայլերը.

- փրփուրներում չպարունակվող և 5 տոննա կամ ավելի CO₂-ին համարժեք քանակությամբ ֆտոր պարունակող ջերմոցային գազեր պարունակող սարքավորումներ շահագործող անձինք ապահովում են, որ սարքավորումներն արտահոսքերի առումով ստուգվեն,
- 10 տոննայից պակաս քանակությամբ ֆտոր պարունակող ջերմոցային գազեր պարունակող հերմետիկ փակ սարքավորումները այս կանոնակարգի իմաստով ենթակա չեն արտահոսքի ստուգումների՝ պայմանով, որ սարքավորումները պիտակավորված են որպես հերմետիկ փակ,
- Էլեկտրական բաշխիչ սարքը ենթակա չէ արտահոսքի ստուգումների՝ պայմանով, որ այն համապատասխանում է հետևյալ պայմաններից որևէ մեկին՝
 - դրա փորձարկված արտահոսքի արագությունը տարեկան 0,1%-ից ցածր է, ինչպես սահմանված է արտադրողի տեխնիկական պայմաններով, և այն համապատասխանաբար պիտակավորված է

- դրանում տեղադրված է ճնշման կամ խտության դիտանցման սարք, կամ
- այն պարունակում է 6 կգ-ից պակաս ֆտոր պարունակող ջերմոցային գազեր:

Վերոգրյալը կիրառվում է ֆտոր պարունակող ջերմոցային գազեր պարունակող հետևյալ սարքավորումները շահագործող անձանց նկատմամբ՝ ստացիոնար սառնարանային սարքավորումներ, ստացիոնար օդորակման սարքավորումներ, ստացիոնար ջերմային պոմպեր, ստացիոնար հակահրդեհային պաշտպանության սարքավորումներ, բեռնատար-սառնարանների և կցորդ սառնարանների սառնարանային միավորներ, էլեկտրական բաշխիչ սարքեր, Ռենկինի օրգանական ցիկլեր:

Շահագործող անձինք կազմում և պահպանում են յուրաքանչյուր այդպիսի սարքավորման մասին տվյալներ՝ նշելով տեղակայված՝ ֆտոր պարունակող ջերմոցային գազերի քանակությունը և տեսակը, տեղակայման, տեխնիկական շահագործման կամ սպասարկման կամ արտահոսքի պատճառով ֆտոր պարունակող ջերմոցային գազերի ավելացած քանակությունները, արդյոք տեղակայված՝ ֆտոր պարունակող ջերմոցային գազերի քանակությունները վերամշակվել կամ վերականգնվել են, այդ թվում՝ վերամշակման կամ վերականգնման օբյեկտի անվանումը և հասցեն և անհրաժեշտության դեպքում՝ հավաստագրի համարը, օգտահանված ֆտոր պարունակող ջերմոցային գազերի քանակությունը, այն տնտեսավարող սուբյեկտի նույնականացման տվյալները, որը տեղակայել, սպասարկել, տեխնիկապես շահագործել և անհրաժեշտության դեպքում վերանորոգել կամ շահագործումից հանել է սարքավորումը, այդ թվում՝ հարկ եղած դեպքում՝ դրա հավաստագրի համարը, ստուգումների ամսաթվերը և արդյունքները, եթե սարքավորումը հանվել է շահագործումից, ապա ֆտոր պարունակող ջերմոցային գազերն օգտահանելու և հեռացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները: Վերոհիշյալ տվյալների պահման համար անհրաժեշտ է ստեղծել տվյալների բազա:

Ֆտոր պարունակող ջերմոցային գազեր մատակարարող տնտեսավարող սուբյեկտները կազմում են ֆտոր պարունակող ջերմոցային գազերի գնորդների մասին տվյալներ՝ կապված գնորդների հավաստագրերի համարների և գնված ֆտոր պարունակող ջերմոցային գազերի համապատասխան քանակությունները: Քանի որ այդ տվյալները պարունակում են բնապահպանական բնույթի տեղեկություններ, անհրաժեշտության դեպքում կիրառվում է 2003/4/ԵՀ հրահանգը⁵⁵:

Դիտարկվող կանոնակարգի մոտարկման գործընթացի առումով հարկ է նշել, որ ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ծրագիրը մշակման փուլում է: Այն հաստատման է ներկայացվելու 2023 թվականի աշնանը Բազմակողմանի հիմնադրամի Գործադիր կոմիտեի 93-րդ նիստին: Նշված նիստում հաստատման արժանանալուց հետո ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացումը նախատեսվում է 2024 թվականից սկսած: Այս շրջանակներում նաև մեկնարկել է

⁵⁵ Սույն հրահանգը ինչպես արդեն նշվել է առավելապես հենվում է Օրհուսի կոնվենցիայում ամրագրված նպատակների ու սկզբունքների վրա:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 754-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակումը:

Նշված ակտերի նախագծերը հետազոտության ժամանակահատվածում պատրաստ չլինելու պատճառով չեն տրամադրվել լիազոր մարմնի կողմից, ուստի, հնարավոր չէ հավաստաինալ փաստաթղթերում ամրագրվելիք իրավակարգավորումների և նշված կանոնակարգի ռելեվանտ հոդվածների մոտարկման համապատասխանության մեջ:

Միջոցառում 8. (127) – Մեկնարկած



ՀՀ պարտավորությունը – մինչև 2024 թվականի առաջին եռամսյակը մոտարկել ազգային օրենսդրությունը թիվ 517/2014 ԵՄ կանոնակարգին:

Այս միջոցառմամբ ՀՀ-ն պարտավորվել է ապահովել ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ծրագրի մշակումը, որը ներառելու է վերականգնման իրականացումը, համապատասխան անձնակազմին և ընկերություններին ներկայացվող՝ վերապատրաստման և հավաստագրման ներպետական պահանջների սահմանումը 517/2014 կանոնակարգին համաձայն:

Կանոնակարգը սահմանում է օգտահանման հետ կապված հարաբերությունները. Փրփուրներում չպարունակվող ֆտոր պարունակող ջերմոցային գազեր պարունակող ստացիոնար սարքավորումներ կամ բեռնատար-սառնարանների և կցորդ-սառնարանների սառնարանային միավորներ շահագործող անձինք ապահովում են, որ այդ գազերի օգտահանումն իրականացվի այդ գազերը վերամշակելու, վերականգնելու կամ կազմալուծելու համար համապատասխան հավաստագրեր ունեցող ֆիզիկական անձանց կողմից:

Այդ պարտավորությունը կիրառվում է սառեցման, օդորակման և ջերմային պոմպերի ստացիոնար սարքավորումների սառեցման սխեմաներ, բեռնատար-սառնարանների և կցորդ-սառնարանների սառնարանային միավորների սառեցման սխեմաներ, ֆտոր պարունակող ջերմոցային գազի հիմքով լուծիչներ պարունակող ստացիոնար սարքավորումներ, հակահրդեհային պաշտպանության ստացիոնար սարքավորումներ, էլեկտրական բաշխիչ ստացիոնար սարք շահագործող անձանց նկատմամբ:

Այն տնտեսվարող սուբյեկտը, որը ֆտոր պարունակող ջերմոցային գազի կոնտեյներն օգտագործում է անմիջապես նախքան դրա հեռացումը, կազմակերպում է ցանկացած մնացորդային գազի օգտահանումը՝ համոզվելու համար, որ դրանք վերամշակվում, վերականգնվում կամ կազմալուծվում են:

2006/40/ԵՀ հրահանգով կարգավորվող ավտոտրանսպորտային միջոցների օդորակման սարքավորումներից արտազատվող ֆտոր պարունակող ջերմոցային գազերի օգտահանման համար համապատասխան որակավորում ունեցող կհամարվեն միայն այն ֆիզիկական անձինք, որոնք առնվազն ունեն 10 (2) հոդվածի համաձայն տրված վերապատրաստման վկայագրեր:

Մոտարկվող կանոնակարգով սահմանվում է արտադրողի պատասխանատվության սխեմաները: Պետությունը պետք է խրախուսի արտադրողների պատասխանատվության սխեմաների մշակումը ֆտոր պարունակող ջերմոցային գազերի օգտահանման և դրանց վերամշակման, վերականգնման կամ կազմալուծման համար:

Պետությունը պետք է կազմակերպի վերապատրաստման կամ հավաստագրման ծրագրեր, ներառյալ՝ գնահատման գործընթացները՝ ապահովելով, որ դասընթացները հասանելի լինեն նշված սարքավորումների տեղակայում սպասարկում, տեխնիկական շահագործում, վերանորոգում կամ շահագործումից հանում իրականացնող ֆիզիկական անձանց համար, նշված սարքավորումների արտահոսքի ստուգում իրականացնող ֆիզիկական անձանց նկատմամբ և ֆտոր պարունակող ջերմոցային գազերի օգտահանում իրականացնող ֆիզիկական անձանց համար: Հավաստագրման ծրագրերը և վերապատրաստումը պետք է ներառեն կիրառելի կարգավորումներն ու տեխնիկական չափորոշիչները, արտանետումների կանխարգելումը, ֆտոր պարունակող ջերմոցային գազերի օգտահանումը, հավաստագրով կարգավորվող տեսակի և չափի սարքավորման անվտանգ գործարկումը, ֆտոր պարունակող ջերմոցային գազերի օգտագործումը փոխարինելու կամ նվազեցնելու համապատասխան տեխնոլոգիաների և դրանց անվտանգ գործարկման վերաբերյալ տեղեկություններ:

Այս միջոցառման մի մասը ենթակա է մոտարկման՝ կապված ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ծրագրի մշակման հետ, որի մեջ ներառվելու է նաև նշված Կանոնակարգի հիշատակված հողվածներով նախատեսված միջոցառումները: Հաշվի առնելով, որ ազգային ծրագրի նախագիծը դեռևս պատրաստ չէ, ապա հնարավոր չէ գնահատական տալ մոտարկման գործընթացի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է օգտագործված վերահսկվող նյութերի վերականգնման, վերամշակման, կրկնակի օգտագործման և ոչնչացման պարտավորություններին, ապա անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի համար այս փուլում լիովին չեն կիրառվում, քանի որ երկրում վերամշակման և ոչնչացման հնարավորություններ առկա չեն⁵⁶:

Միջոցառում 9. (128) - Մեկնարկած



ՀՀ պարտավորությունը – մինչև 2024 թվականի առաջին եռամսյակը մոտարկել ազգային օրենսդրությունն ԵՄ թիվ 517/2014 կանոնակարգին:

Այս միջոցառմամբ ՀՀ-ն պարտավորվել է ապահովել պիտակավորման համակարգի ստեղծումն այն արտադրատեսակների և սարքավորումների համար, որոնք պարունակում են ֆտորացված ջերմոցային գազեր կամ դրանց գործունեությունը կախված է այդ գազերից, ինչպես նաև համապատասխան հատվածներից արտանետումների վերաբերյալ տվյալների

⁵⁶ Միջազգային հետազոտությամբ արված այս դիտարկումը հաստատվել է ՀՀ ՇՄՆ՝ օզոնի ծրագրի շրջանակներում:

ձեռքբերման համար հաշվետվությունների ներկայացման համակարգի ստեղծում ԵՄ թիվ 517/2014 կանոնակարգի 12, 19 և 20 հոդվածների համաձայն:

Կարգավորումների համաձայն այն արտադրատեսակներն ու սարքավորումները, որոնք պարունակում են ֆտոր պարունակող ջերմոցային գազեր կամ որոնց գործարկումը կախված է դրանցից, չեն շուկայահանվում, քանի դեռ դրանք պիտակավորված չեն: Դա վերաբերելի է սառնարանային սարքավորումներին, օդորակման սարքավորումներին, ջերմային պոմպերին, հակահրդեհային պաշտպանության սարքավորումներին, էլեկտրական բաշխիչ սարքերին, ֆտոր պարունակող ջերմոցային գազեր պարունակող անոթազուլային դիսպենսերներին՝ բացառությամբ դեղագործական բաղադրիչների առաքման համար նախատեսված չափիչ-դոզային ինհալատորների, բոլոր ֆտոր պարունակող գազերի կոնտեյներներին, ֆտոր պարունակող գազի հիմքով լուծիչներին, Ռենկինի օրգանական ցիկլին: Պիտակավորման գործընթացի համար կարևոր են նաև, որ պիտակի վրա նշվեն տեղեկություններ այն մասին, որ արտադրանքը կամ սարքավորումը պարունակում է ֆտոր պարունակող ջերմոցային գազեր, կամ որ դրա գործարկումը կախված է այդպիսի գազերից, կամ համապատասխան ֆտոր պարունակող ջերմոցային գազերի ընդունված արդյունաբերական նշանակությունը, կամ եթե այդպիսի նշանակություն առկա չէ, ապա քիմիական անվանումը, նաև կարող են նշվել տվյալներ այն մասին, որ հերմետիկ փակ սարքավորման մեջ առկա են ֆտոր պարունակող ջերմոցային գազեր կամ որ էլեկտրական բաշխիչ սարքի փորձարկված արտահոսքի արագությունը տարեկան 0,1%-ից ցածր է, ինչպես նշված է արտադրողի տեխնիկական պայմաններում: Կանոնակարգի 12-րդ հոդվածում ներկայացված են նաև պիտակի հետ կապված այլ պահանջներ, որոնք պետությունն ըստ անհրաժեշտության պետք է մոտարկի: Կանոնակարգով սահմանվում է նաև նյութերի արտադրության, ներմուծման, արտահանման, որպես հումք օգտագործման և կազմալուծման վերաբերյալ հաշվետվության ներկայացման կարգը: Պետությունը, սույն միջոցառման կատարման շրջանակներում նշված որոտների համար ստեղծում է հաշվետվությունների ներկայացման համակարգ՝ նպատակ ունենալով արտանետումների վերաբերյալ հնարավորինս շատ տվյալներ ստանալ:

Հարկ է նշել, որ այս միջոցառման կատարման նպատակով մշակվում է «Ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ծրագիրը», որտեղ առկա են լինելու իրավակարգավորումներ պիտակավորում ներդնելու հետ կապված⁵⁷: Այն հաստատման է ներկայացվելու 2023 թվականի աշնանը Բազմակողմանի հիմնադրամի Գործադիր կոմիտեի 93-րդ նիստին: Նշված նիստում հաստատման արժանանալուց հետո ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացումը նախատեսվում է 2024 թ-ից սկսած:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն սույն միջոցառման համար նախատեսված ժամկետն իրատեսական չէ և ենթակա է փոփոխության: Ազգային ծրագրի հաստատումից կիստակեցվեն մի շարք հարցեր, այդ թվում ռեսուրսների հարցը:

⁵⁷ Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության շրջանակներում գործող Օգոնի ծրագրի:



ՀՀ պարտավորությունը – մինչև 2024 թվականի առաջին եռամսյակը մոտարկել ազգային օրենսդրությունն ԵՄ թիվ 517/2014 կանոնակարգին:

Այս միջոցառմամբ ՀՀ-ն պարտավորվել է ապահովել ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ծրագրի մշակումը, որը կներառի կատարման համակարգի վերաբերյալ դրույթներ՝ ԵՄ թիվ 517/2014 կանոնակարգի 25-րդ հոդվածի համաձայն:

ԵՄ թիվ 517/2014 կանոնակարգի 25-րդ հոդվածը վերաբերում է պատասխանատվության կիրառման հետ կապված հարցերին:

Ներպետական մակարդակով անհրաժեշտ է նաև ամրագրել, որ տնտեսվարող սուբյեկտներին, որոնք գերազանցել են հիդրոֆտորածխածինների շուկայահանման նպատակով կանոնակարգի համապատասխան հոդվածների համաձայն իրենց հատկացված կամ փոխանցված քվոտան, գերազանցումը հայտնաբերվելուց հետո քվոտավորման ժամանակահատվածի համար կարող է հատկացվել միայն նվազեցված քվոտա: Նվազեցման չափը հաշվարկվում է այն գումարի 200%-ի չափով, որով քվոտան գերազանցվել էր: Եթե նվազեցման չափն ավելին է, քան գերազանցումը հայտնաբերվելուց հետո քվոտավորման ժամանակահատվածի համար որպես քվոտա հատկացվող չափը, ապա քվոտավորման այդ ժամանակահատվածի համար որևէ քվոտա չի հատկացվում, և հաջորդ քվոտավորման ժամանակահատվածի համար նախատեսված քվոտան նույն եղանակով նվազեցվում է մինչև հանվելը:

Գործող օգոնային շերտի պահպանության մասին ՀՀ օրենքում, մասնավորապես Օրենքի պահանջների խախտման դեպքում օրենքով սահմանված կարգով կիրառվում է պատասխանատվություն:



ՀՀ պարտավորությունը – մինչև 2021 թվականի առաջին եռամսյակը մոտարկել ազգային օրենսդրությունն ՀԸԳՀ 52 և 54 հոդվածներին:

Այս միջոցառմամբ ՀՀ պարտավորվել է ապահովել կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության հայեցակարգի ու ազգային գործողությունների ծրագրի մշակումը՝ ուղղված գյուղատնտեսական, տնտեսական և կլիմայի վրա հնարավոր ազդեցություն ունեցող այլ ոլորտներում կլիմայական փոփոխությունների մեղմացման, նվազեցման և կանխարգելման պահանջներին և միջոցառումներին համահունչ գործունեության պլանավորմանը և իրականացմանը՝ ՀԸԳՀ 52 հոդվածի (b), ՀԸԳՀ 54 հոդվածի (c) և (d) կետերի համաձայն:

2021 թվականի 13 մայիսին ընդունվել է ՀՀ կառավարության թիվ N 749-Լ որոշումը կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին: Հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը հատկորոշում է հարմարվողականության ռազմավարական շրջանակը և ազգային հարմարվողականության պլանավորման ջանքերը, ինչպես նաև՝ հետագայում հարմարվողականությունը շարունակական և պարբերական հիմունքներով ուղղորդելու նպատակով: Ծրագիրը որպես ճանապարհային քարտեզ է ծառայում՝ ոլորտային քաղաքականությունների, տարածքային ու տեղական զարգացման և համապատասխան ֆինանսական պլանավորման գործընթացներում ՀԱԾ ներառման և իրագործման համար, միաժամանակ հանդիսանում է ելակետային փաստաթուղթ տարբեր ոլորտներում հարմարվողականության պլանավորման գործողությունների միասնականացման և համակարգման համար:

Ծրագիրը Հայաստանի ազգային հարմարվողականության պլանավորման գործընթացի առաջին փուլն է՝ միաժամանակ նպաստելով հարմարվողականության հնարավորությունների ինտեգրմանը ոլորտային և մարզային զարգացման ծրագրերում⁵⁸: Ծրագրով ընդգծված է Հայաստանի խոցելիությունը ԿՓ նկատմամբ: Առանձնացված են ինստիտուցիոնալ, տեղեկատվական, գիտելիքային և տեխնոլոգիական և ֆինանսական խոչընդոտները⁵⁹:

2023թ. 1-ին եռամսյակում ձեռք է բերվել 11 ավտոմատ օդերևութաբանական կայաններ (տեղադրվելու են Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզերում), գերժամանակակից արբայնակային համակարգ, մշակվում է տվյալների միասնական համակարգ և բջջային հեռախոսի հավելված:

Միջոցառում 12. (131) - Մեկնարկած



ՀՀ պարտավորությունը – մինչև 2024 թվականը մոտարկել ազգային օրենսդրությունն ՀԸԳՀ 54 հոդվածի (յ) կետի և ԵԽ և Խորհրդի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1005/2009 կանոնակարգին:

Այս միջոցառմամբ ՀՀ-ն պարտավորվել է ապահովել օգոնային շերտը վնասող գազերի և ֆտորացված գազերի հետ կապված բոլոր միջոցառումների իրականացումը, սահմանել հսկման ենթակա նյութերի՝ բացառությամբ հատուկ կիրառությունների, և մինչև [2019 թվականի հունվարի 1-ը]՝ հիդրոքլորֆտորածխաջրածինների (ՀՔՖԱ-ների) արտադրության արգելքը, սահմանել հսկման ենթակա նյութերի արտադրության, շուկայահանման և օգտագործման և բացառություններ կազմող կիրառությունների (որպես հումք, տեխնոլոգիական ազդանյութեր, լաբորատոր և անալիտիկ գործունեության համար էական նշանակության կիրառություններ, հալոնների չափազանց անհրաժեշտ կիրառություններ) և առանձին շեղումների համար՝ ներառյալ արտակարգ իրավիճակներում մեթիլբրոմիդի կիրառությունները (III գլուխ), սահմանել հսկման ենթակա նյութերի բացառություններ

⁵⁸ Տես՝ Հավելված

⁵⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152612>

կազմող կիրառությունների համար ներմուծման և արտահանման լիցենզավորման համակարգի ստեղծում (IV գլուխ) և ձեռնարկությունների՝ հաշվետվություններ ներկայացնելու պարտավորությունները՝ ՀՀ 54 հոդվածի (j) կետի և ԵԽ և Խորհրդի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1005/2009 կանոնակարգի համաձայն:

Կանոնակարգը կարգավորում է արգելքների, կարգավորվող նյութերի շուկայահանման և օգտագործման, Կարգավորվող նյութեր պարունակող կամ դրանցից կախված ապրանքների և սարքավորումների շուկայահանման, բացառությունների և շեղումների, հիդրոքլորֆտորածխածիններից բացի այլ կարգավորվող նյութերի կարևոր լաբորատոր և անալիտիկ կիրառությունների, հալոնների չափազանց անհրաժեշտ կիրառությունների և հալոններ պարունակող սարքավորումների շահագործման դադարեցման և այլ հարցերի հետ կապված հարաբերություններ:

Մաս 3. Առաջարկություններ ճանապարհային քարտեզի կլիմայի փոփոխության վերաբերյալ միջոցառումների կատարման առնչությամբ

I. Ընդհանուր բնույթի առաջարկություններ

ԵՄ հրահանգի/կանոնակարգերի վերաբերյալ

- Անհրաժեշտ է ճանապարհային քարտեզում ներառված ԵՄ հրահանգներն/կանոնակարգերը կոնկրետացնել ըստ հողվածների՝ ավելի կոնկրետ արդյունք ունենալու նպատակով, քանզի ամբողջությամբ վկայակոչված հրահանգը կամ կանոնակարգը հստակ չէ մոտարկման գործողությունների և արդյունքների իմաստով.
- Անհրաժեշտ է տարբեր միջոցառումներում կրկնվող ԵՄ հրահանգն/կանոնակարգերը ըստ արդյունքի խմբավորել կամ մի միջոցառմամբ նախատեսված մեկ հրահանգի/կանոնակարգի տարբեր միջոցառումները մասնավորեցնել:

Ճանապարհային քարտեզով սահմանված միջոցառումների վերաբերյալ

- Անհրաժեշտ է հստակեցնել ճանապարհային քարտեզում ներառված թիվ 601/2012/ԵՄ, 600/2012, 525/2013, 517/2014, 1005/2009 կանոնակարգերի կոնկրետ հողվածները.
- Անհրաժեշտ է ճանապարհային քարտեզի երկրորդ սյունակի արդյունքների հատվածում կոնկրետացնել նորմատիվ իրավական ակտերի շրջանակը (գործող կամ նոր ընդունվելիք օրենքի/ենթաօրենսդրական ակտի ընդունման և փոփոխությունների ու լրացումների մշակման հետ կապված)՝ չափելի արդյունք ստանալու նպատակով.
- Անհրաժեշտ է խուսափել տարբեր միջոցառումներում կրկնվող գործողություններից, ինչպես նաև միևնույն արդյունքի ստեղծմանն ուղղված միջոցառումների ամրագրման կրկնությունից:

II. Առանձին միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ

Միջոցառում 1 (120)

- Ճանապարհային քարտեզի 120-րդ միջոցառման երկրորդ՝ Նախատեսվող միջոցառումները» վերտառությամբ սյունակում անհրաժեշտ է հստակեցնել նորմատիվ իրավական ակտերի կոնկրետ շրջանակը, ինչպիսին ճանապարհային քարտեզի ողջ տրամաբանությունն է: Մասնավորապես, ճանապարհային քարտեզի նշված միջոցառման երկրորդ սյունակում անհրաժեշտ է ամրագրել որպես արդյունք.

- Կլիմայի փոփոխության վերաբերյալ օրենքի ընդունում, ինչպես նաև օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունում.
- Ջերմոցային գազերի գույքագրման և նույնականացման համակարգերի իրավական հիմքի ամրագրում. անհրաժեշտ է հստակեցնել իրավական հիմքը, թե որ իրավական ակտի միջոցով է պետք է նախատեսել այս համակարգերը.
- Անհրաժեշտ է Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքը համապատասխանեցնել կլիմայի հետ կապված ԵՄ թիվ 2003/87 հրահանգի հետ՝ կապված նույնականացման, արտանետումների թույլտվություն հասկացության հետ:

Միջոցառում 2-րդ (121)

- Ճանապարհային քարտեզի երկրորդ սյունակում նախատեսել «Կլիմայի փոփոխության վերաբերյալ» օրենքի ընդունումը, «Ջերմոցային գազերի գույքագրման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի ընդունումը:
- Արխիվացման գործընթացի վերաբերյալ հստակեցնել իրավական հիմքը՝ հաշվի առնելով մոտարկվող Կանոնակարգի մոտեցումները.
- Հստակեցնել հաշվետվայնության համակարգի հետ կապված իրավական հիմքը:

Միջոցառում 3-րդ (122)

- Ճանապարհային քարտեզի երկրորդ սյունակում նախատեսել հաշվետվությունների ներկայացման համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումների իրավական հիմքը:

Միջոցառում 4-րդ (123)

- Ճանապարհային քարտեզի առաջին սյունակում անհրաժեշտ է նախատեսել նաև «Մաքուր օդ Եվրոպայի համար» հրահանգի մոտարկումը.
- Ճանապարհային քարտեզի երկրորդ սյունակում անհրաժեշտ է նախատեսել «Չափողական, հաշվետվայնության ու հավաստագրման (ՉՀՀ/MRV) համակարգի հիմնման իրավական հիմքը, որը տվյալ դեպքում՝ Կլիմայի մասին օրենքն է»:

Միջոցառում 5-րդ (124)

- Անհրաժեշտ է ՃԲ-ով սահմանված միջոցառման կատարման համար առաջին սյունակում նախատեսել թիվ 50 ԵՄ օդի պահպանության հրահանգի կոնկրետ հոդվածները:

Միջոցառում 6-րդ (125)

- ՃՔ երկրորդ սյունակում հստակեցնել ընդունվելիք նորմատիվ իրավական ակտերի շրջանակը.
- Իրականացնել հետազոտություն՝ Օգոնաքայքայիչ նյութերի և հիդրոֆտորածխածինների ոչնչացման հզորությունների ներդրման հնարավորությունների վերաբերյալ:

Միջոցառում 7-րդ (126)

- Որպես արդյունք նախատեսել՝ Մշակել և հաստատել ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ծրագիրը.
- 2024 թվականից մեկնարկել ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ծրագրով նախատեսված միջոցառումները.
- Մշակել և ընդունել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 754-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը:

Միջոցառում 8-րդ (127)

- Անհրաժեշտ է ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի երրորդ սյունակում միջոցառման համար նախատեսված վերջնաժամկետը վերանայել՝ ավելի երկար ժամկետ նախատեսելով (2026թ.).
- Անհրաժեշտ է վերապատրաստումների և հավաստագրման գործընթացի կազմակերպման նպատակով ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը, որն էլ հիմք կծառայի նորմատիվ իրավական ակտի հետագա մշակման համար.
- Կիրառել TAIX և վերապատրաստման գործիքակազմ սույն միջոցառման համար:

Միջոցառում 9-րդ (128)

- Անհրաժեշտ է վերանայել սույն միջոցառման իրականացման հնարավորությունները և ավելի երկար ժամկետ նախատեսել սույն միջոցառման արդյունավետ կազմակերպման համար (2026թ.):

Միջոցառում 10-րդ (129)

- Անհրաժեշտ է վերացնել ԵՄ թիվ 517/2014 կանոնակարգի 25-րդ հոդվածով նախատեսված պատժամիջոցների վերաբերյալ դրույթների և ՃՔ-ի 129-րդ միջոցառմամբ նախատեսված ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ծրագրի մշակման հետ կապված միջաջումների իմաստային հակասությունը, քանի որ նշված կանոնակարգի մատնանշված հոդվածը բացառապես վերաբերում է պատժատեսակներին:

- Ճանապարհային քարտեզի երկրորդ սյունակում անհրաժեշտ է որպես արդյունք նախատեսել պատասխանատվության հետ կապված իրավական հիմքի ապահովում:

Միջոցառում 11-րդ (130)

- ՃԲ երկրորդ սյունակում նախատեսված միջոցառումն ընդհանուր առմամբ կրկնում է առաջին միջոցառումից բխող գործողություններից մեկի էությունը, ուստի այս մասով միջոցառումները կարող են միավորվել: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ այս միջոցառումն ըստ ՃԲ նախատեսված ժամկետի արդեն ավարտված է, ինչը վկայում է այն մասին, որ ՃԲ-ում տվյալ միջոցառման շրջանակում պահպանելն այնքան էլ նպատակահարմար չէ:

Միջոցառում 12-րդ (131)

- ՃԲ-ի առաջին սյունակում անհրաժեշտ է կոնկրետացնել հիշատակված կանոնակարգի հոդվածը/հոդվածները.
- Անհրաժեշտ է ՃԲ այս միջոցառման համար որպես արդյունք նախատեսել մոտարկվելիք կանոնակարգի միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. ՀԸԳՀ ՃԲ նախատեսված միջոցառումների կատարման կարգավիճակը

Միջոցառում	Կատարման ընթացք	Ընթացիկ արդյունք
120-րդ միջոցառում	Հիմնականում կատարված է	- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք - ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր - Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները (ԱՍԳ)/ հաստատելու մասին 22 ապրիլի 2021 թվականի թիվ 610-Լ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում - «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների Ազգային մակարդակով սահմանված գործողությունների իրականացման ծրագիրը, ֆինանսավորման ռազմավարությունն ու ներդրումային պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը - «Հայաստանի Հանրապետության ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ (մինչև 2050 թվական) ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծ - «Կլիմայի մասին» ՀՀ օրենքի նախագծի հայեցակարգ:
121-րդ միջոցառում	Մասնակի կատարված է	- ««Ջերմոցային գազերի արտանետումների մասին» ձև 1-ՋԳ (երկամյա) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծ - «Ջերմոցային գազերի գույքագրման կարգը հաստատելու մասին» Կառավարության - որոշման նախագիծը - ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2020 թվականի փետրվարի 27-ի թիվ 10-Ա որոշմամբ ընդունված կլիմայի փոփոխության վիճակագրության զարգացման ճանապարհային քարտեզ
122-րդ միջոցառում	Մեկնարկը տրված է	- «Փարիզի համաձայնագրի ներքո Հայաստանի թափանցիկության ազգային շրջանակի կառուցում» ՄԱՁԾ-ԳԷՀ ծրագրի շրջանակներում մշակվել են ՋԳ գույքագրման բարելավման ազգային պլանը և 2018-2019թթ. ՋԳ կադաստրի պիլոտային ծրագիրը: - Փարիզյան համաձայնագրի ներքո ՀՀ 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին 22 ապրիլի 2021 թվականի թիվ 610-Լ ՀՀ կառավարության որոշմամբ հստակեցված են մեթոդոլոգիական մոտեցումները՝ ներառյալ մարդածին ջերմոցային գազերի

		արտանետումների գնահատման և հաշվառման, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, վերացման համար
123-րդ միջոցառում	Հիմնականում կատարված է	- 06.07.2021 թվականին ՀՀ վարչապետի՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհուրդ ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու և ՀՀ վարչապետի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 955-ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 719-Ա վարչապետի որոշում - Կլիմայի մասին օրենքի հայեցակարգ
124-րդ միջոցառում	Հիմնականում կատարված է	- Հետազոտություն միջազգային փորձագետի կողմից՝ կապված ՀՀ-ում իրավական դաշտի առկա բացերի վերլուծության և ԵՄ կլիմայական կարգավորիչ դաշտի հետ մոտարկման ճանապարհային քարտեզի վերաբերյալ - 2020-ի մայիսի 26-ին Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք - 2020-ի օգոստոսի 20-ին ընդունված թիվ 1368-Ն Կառավարության որոշման միջոցով հաստատվել է ՀՖԱ-ների ցանկը - Վերահսկվող նյութերի հաշվետվության և տվյալների մշակման ընթացակարգերի մոնիթորինգի և ստուգման ընթացակարգեր - Իրավասու մարմինների և ընկերությունների անձնակազմի կանոնավոր վերապատրաստում - Մոնրեայի արձանագրության և ԵՄ համապատասխան օրենսդրության հետ մոտարկման ազգային օրենսդրության իրազեկման բարձրացման քարոզարշավներ
125-րդ միջոցառում	Հիմնականում կատարված է	- «Օգոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք - Հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններ կապված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական հարկի դրույքաչափերի հետ - «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ - Կարգավորվող նյութերի ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին հաշվետվության հաշվառման կարգը (ՀՀ կառավարության թիվ 1761-Ն որոշում, 28 հոկտեմբերի 2021 թվական) - Օգոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանելու մասին Կառավարության թիվ 754 որոշում (13.05.2021թ.) - Հիդրոֆտորածխածինների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության թիվ 1368-Ն որոշումը (20 օգոստոսի 2020 թվական) - Օգոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների առաքման թույլտվության էլեկտրոնային եղանակով տրամադրման կարգը սահմանելու մասին կառավարության թիվ 1304 որոշումը (12. 08.2021թ.)

126-րդ միջոցառում	Միջոցառումը մեկնարկված է	- Մշակման փուլում է ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ծրագիրը - Մշակման փուլում է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 754-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը
127-րդ միջոցառում	Միջոցառման կատարումը մեկնարկված է	- Անհրաժեշտ է իրականացնել - վերապատրաստումների և հավաստագրման գործընթացի կազմակերման նպատակով միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն - Քննարկվել է TAIX վերապատրաստման գործիքակազմի կիրառման անհրաժեշտության հարցը:
128-րդ միջոցառում	Միջոցառման կատարման մեկնարկի աշխատանքները սկսված են	- Քննարկվել են միջոցառման իրականացման հնարավորությունները
129-րդ միջոցառում	Միջոցառման կատարման մեկնարկի աշխատանքները սկսված են	- Այս միջոցառման կատարման նպատակով մշակվում է ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ազգային ծրագիրը
130-րդ միջոցառում	Միջոցառման համար սահմանված ժամկետն ավարտված է: Միջոցառումը հիմնականում կատարված է:	- Միջոցառմամբ նախատեսված գործողությունների արդյունքները ներկայացված են երկրորդ հավելվածով
131-րդ միջոցառում	Միջոցառման կատարումն մեկնարկված է	- Քննարկվում է միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության կատարման հարցը

Հավելված 2. Ոլորտային հարմարվողականության ծրագրերի վերաբերյալ

Ոլորտային հարմարվողականության ծրագրեր	Կարգավիճակ
1. «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում	Հաստատված է ՀՀ Կառավարության N1962-L որոշմամբ, 03.11.2022թ.
2. «Գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ուղղված հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ	Նախագծով առաջարկվող հարմարվողականության ծրագրի միջոցառումների մի մասը ՀՀ կառավարության N 1222-L որոշմամբ, 20.07.2023թ., ներառվել է ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության կատարմանն ուղղված 2023-2026 թվականների միջոցառումների ծրագրում
3. «Էներգետիկայի ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ	Նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, առաջարկվել է այն ներառել ոլորտի ռազմավարությունում. ընթացքի մեջ է
4. «Առողջապահության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ	Նախագծով առաջարկվող հարմարվողականության ծրագրի միջոցառումների մի մասը ՀՀ կառավարության N 174-L որոշմամբ, 09.02.2023թ., ներառվել է ՀՀ առողջապահության համակարգի 2023-2026 թվականների զարգացման ռազմավարության միջոցառումների ցանկում
5. «Զբոսաշրջության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ	Նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, առաջարկվել է այն ներառել ոլորտի ռազմավարությունում. ընթացքի մեջ է
6. «Անտառների կառավարման ոլորտում կլիմայական ռիսկերի կառավարման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ	
7. Կլիմայի փոփոխության գործոնների ինտեգրում «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի մեջ և հարմարվողականության միջոցառումների ներդրում	Ընթացքի մեջ է, իրականացվում է UNDP/GIZ EU4Sevan ծրագրի շրջանակներում
8. «Տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտում կլիմայական ռիսկի կառավարման և կլիմայի փոփոխության հարմարվողականության պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ	Ասիական զարգացման բանկը (ADB) իր նոր տեխնիկական առաջադրանքով պլանավորում է աջակցել տրանսպորտի հարմարվողականության պլանի մշակմանը, սակայն կարգավիճակը դեռ հստակ չէ պետք է լինի ՀՀ կառավարության որոշում՝ ՀՀ կառավարության 749-L որոշման համաձայն, թե նույն տրամաբանությամբ, ինչպես մյուս ոլորտային հարմարվողականության ծրագրերն են, պետք է ներառվի ոլորտի ռազմավարության մեջ
9. Ութ մարզերի համար կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիր	ՀՀ կառավարության 749-L որոշման Գլուխ 9-ի, 1.10 կետով սահմանված ութ մարզերի հարմարվողականության ծրագրերից երկուը՝ Գեղարքունիքի և Սյունիքի հարմարվողականության ծրագրերի նախագծերը մշակվել են Ճապոնիայի կառավարության ֆինանսավորմամբ ՄԱԶՊ JSB-2 ծրագրով (2022-2023): Ընթանում են մարզային քննարկումները՝ ծրագրերի վալիդացիայի նպատակով, նախատեսվում է մինչև 2023թ. օգոստոսի վերջ վերջնականացնել և ներկայացնել ՏԿԵՆ ու համապատասխան մարզպետարաններ:

Հավելված 3. ՀԸԳՀ ՃԲ՝ Կլիմայի փոփոխության վերաբերյալ ամրագրված միջոցառումների մոտարկման գործընթացի վերաբերյալ հարցաշար⁶⁰

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	ՀԱՐՑԱԴՐՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ
1.120-րդ միջոցառում <i>Հոդված 54, կետ (a)</i> <i>2003/87/ԵՀ հրահանգի 14-րդ, 15-րդ, 16-րդ (1), և 17-րդ հոդվածներ և 601/2012/ԵՄ կանոնակարգ</i> - «Փարիզյան համաձայնագրի»-ց բխող պարտավորությունների կատարման գործողությունների ծրագրի մշակում - համապատասխան կառուցվածքների և ջերմոցային գազերի նույնականացման համակարգի ստեղծում ջերմոցային գազերի (ներառյալ ավիացիոն արտանետումների) դիտանցման, հաշվետվություններ ներկայացնելու, ստուգման և կատարման համակարգերի և հանրային քննարկումների ընթացակարգերի սահմանում	- Այս միջոցառման շրջանակներում ընդունվել/մշակվել են հետևյալ փաստաթղթերը՝ - Հայաստանի 2023-2030թթ. Ազգային մակարդակով սահմանված գործողությունների (ԱՍԳ) իրականացման ֆինանսական ռազմավարության նախագիծը, - «Կլիմայի մասին օրենք»-ի մշակման նպատակով հայեցակարգային առաջարկությունը	1. Ե՞րբ է նախատեսվում նշված ակտերի ընդունումը: • Հայաստանի 2023-2030թթ. Ազգային մակարդակով սահմանված գործողությունների (ԱՍԳ) իրականացման ֆինանսական ռազմավարության նախագիծը մշակվել և դրվել է շրջանառության մեջ : Նախագիծը տեղադրված «Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում»՝ https://www.e-draft.am/projects/5672 : • «Կլիմայի մասին» օրենքի նախագծի մշակման ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են, բայց ակտի ընդունման վերջնական ժամկետների վերաբերյալ դեռևս հստակ տեղեկատվություն չկա: • 120-րդ միջոցառման մեջ նշված՝ «Ջերմոցային գազերի (ներառյալ ավիացիոն արտանետումների) դիտանցման, հաշվետվություններ ներկայացնելու, ստուգման և կատարման համակարգերի և հանրային քննարկումների ընթացակարգերի սահմանում» մասով դեռևս որևէ գործողություն չի մեկնարկվել: - ավիաարտանետումները – ԻԿԱՌ, հաշվետվությունները ներկայացնելը դիրեկտիվի հիման վրա չի արվելու: Կառավարության որոշման մակարդակով? Հանրային քննարկումները այտեղ ընկլավում է օրհուսի կոնվենցիային վերաբերող դիրեկտիվը...միգրացե արված է? 2. Ի՞նչ այլ իրավական ակտեր են մշակվելու:

⁶⁰ Հետազոտության շրջանակներում ՇՄՆ-ին ներկայացվել է սույն հարցաշարը:

		ՀՀ համակարգի հիմնման և գործարկման շրջանակներում նախատեսվում է իրավական ակտերի ընդունում, որոնք կհստակեցվեն այդ ուղղությամբ քննարկումներն ավարտական փուլ հասնելու դեպքում:
2.121-րդ միջոցառում <i>Հոդված 52, կետ (a), (b)</i> <i>հոդված 54 կետ (b)</i> Ջերմոցային գազերի արտանետումների (ներառյալ ավիացիոն արտանետումների) գույքագրման ազգային համակարգի ստեղծում, քաղաքականությունների, միջոցների և կանխատեսումների ներպետական համակարգի ստեղծում և համապատասխան ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում	Այս միջոցառման նպատակով ընդունվել/մշակվել են՝ - Հայաստանի 2023-2030թթ. Ազգային մակարդակով սահմանված գործողությունների (ԱՍԳ) իրականացման ֆինանսական ռազմավարության նախագիծը, - «Հայաստանի Հանրապետության ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ (մինչև 2050 թվական) ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, - «Կլիմայի մասին օրենք»-ի մշակման նպատակով հայեցակարգային առաջարկությունը:	1. Ի՞նչ իրավական ակտեր են ընդունվել: Դեռևս ընդունված իրավական ակտ գոյություն չունի: Ձևաչափ-վճ կոմիտե 2. Ի՞նչ ինստիտուցիոնալ միջոցառումներ են նախատեսվում գույքագրման ազգային համակարգի ստեղծման հետ կապված /հատկապես ավիացիոն արտանետումների հետ կապված/: Ինստիտուցիոնալ առումով ջերմոցային գազերի գույքագրումը նախատեսվել է, որ կիրականացվի հաշվի առնելով շրջակա միջավայրի նախարարության ենթակա «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարողությունները: /առկա է կառավար որոշման նախագիծ, փակվում է լրիվ? Կանոնադրություն – իրենց գործառնությունների մասով 3. Ի՞նչ քայլեր են ձեռնարկվել ԶԳ արտանետումների կանխատեսումների ներպետական համակարգի ստեղծման նպատակով: • Կառավարության 6.3 կետով նախատեսված է ընդունել «Հայաստանի Հանրապետության ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ (մինչև 2050 թվական) ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծ: Ներկա պահին նախագիծը շրջանառվում է շահագրգիռ գերատեսչություններում: • Գենդերային քաղաքականության չորրեղ կետ • «Կլիմայի մասին» օրենքի մշակման նպատակով հայեցակարգային առաջարկությունը շրջանառվում է շահագրգիռ գերատեսչություններում:

3.122-րդ միջոցառում <i>Հոդված 54, կետ (e), (f)</i> <i>2003/87/ԵՀ հրահանգ,</i> <i>600/2012 կանոնակարգ</i> Ջերմոցային գազերի մարդածին արտանետումների ազգային կադաստրների և ազգային հաղորդագրությունների և երկամյա զեկույցների պարբերական զարգացում	3.Մշակվել են՝ - ԶԳ գույքագրման բարելավման ազգային պլանը, - 2018-2019թթ. ԶԳ կադաստրը,	1. Ի՞նչ քայլեր են արվում ԱՀ/հիդրո- քսան վեցին կտան/ և երկամյա զեկույցների պարբերական մշակման ուղղությամբ: Ազգային կադաստրների և ազգային հաղորդագրությունների և երկամյա զեկույցների պարբերական մշակումն ապահովելու համար դիմվել է դոնոր կազմակերպություններին ֆինանսական միջոցներ հայթայթելու նպատակով: /ուժ կոնկրետ, ինչ նկատակով՝ միայն ուսումնասիրություն արվի, որ կարողությունների զարգացմանն ուղղվի, որ ինստիտուցիոնալ գործառնության համար.-նպատակը/ 2. Հնարավո՞ր են որակի բարելավման հետ կապված փոփոխություններ՝ հիմնված ԿՓ կոնվենցիայի կարգավորումների և IPCC կողմից ընդունված ուղեցույցների վրա: Որակի բարելավման և հնարավոր փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ որոշումը կարող է կայացվել առաջին կետում նշված ուսումնասիրության արդյունքների հիման վրա քննարկումների արդյունքում: / IPCC կողմից ընդունված ուղեցույցների ճիշտ կիրառման հարցն էլ դրված?
4.123-րդ միջոցառում <i>Հոդված 54, կետ (d)</i> <i>525/2013 կանոնակարգ</i>	ՀՀՀ (MRV) համակարգի հիմնում, կլիմայի փոփոխության խնդիրների լուծմանը ուղղված տեխնոլոգիաների զարգացման և փոխանցման գործընթացի ձևավորում ու հետևողական ամրապնդում	1. Արդյո՞ք մեկնարկվել կամ ձևավորվել է տեխնոլոգիաների զարգացման և փոխանցման գործընթացը: - Ոչ: 2. Ի՞նչ իրավական և ինստիտուցիոնալ միջոցառումներ են նախատեսվում: - «Հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թթ միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 13 մայիսի 2021, N 749-Լ որոշման հավելվածի 9-րդ գլխի 1.15 կետով նախատեսված է «Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված տեխնոլոգիաների ներդրման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ: /կա արդեն նախագիծ? Նախատեսվում է – հարմարվողականության- մթնլորտայի օդի օրենքի հետ կապ

		Նշված գործողության համար վերջնաժամկետ սահմանվել է 2025 թվականի 4-րդ եռամսյակը: 3. Արդյո՞ք մշակվել է տվյալների ցանկը և հավաքագրման կարգի վերաբերյալ կառավարության որոշման նախագիծը: - Այո: 4. Ո՞րքանով է իրատեսական հավաստագրման գործընթացի ապահովումը՝ ֆինանսական կարողությունների համատեքստում: Հավաստագրման ո՞ր համակարգին՝ միջազգային, թե ազգային կտրվի առաջնահերթություն: - Հայաստանի ֆինանսական կարողությունները դեռևս բավարար չեն հավաստագրման գործընթացը սեփական միջոցների հաշվին արդյունավետ իրականացնելու համար: Հավաստագրման որևէ համակարգին առաջնահերթություն տալուց առաջ կուսումնասիրվի միջազգային լավագույն փորձը, այնուհետև, հաշվի առնելով առկա ինստիտուցիոնալ և իրավական դաշտերի շրջանակները՝ որոշում կկայացվի առավել արդյունավետ տարբերակի վերաբերյալ:
5. 124-րդ միջոցառում Հոդված 54 (j) 517/2014 ԵՄ կանոնակարգ (սույն կանոնակարգի վերաբերյալ Համաձայնագրի 4-րդ Հավելվածում ոչ մի հոդված նշված չէ) Օգոնային շերտը քայքայող նյութերի՝ հիդրոքլորֆտորածխածինների և դրանց փոխարինողների՝ հիդրոֆտորածխածինների փոխարինմանը ուղղված միջոցառումների իրականացում	- 2020-ի մայիսի 26-ին Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը, - Կարգավորվող նյութերի ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին հաշվետվության հաշվառման կարգը (ՀՀ կառավարության թիվ 1761-Ն որոշում, 28 հոկտեմբերի 2021 թվական), - Օգոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածին	1. Բացի նշված իրավական ակտերից, ի՞նչ այլ ակտեր են ընդունվելու: - Որևէ այլ ակտ ներկայումս չի նախատեսվում: 2. Արդյո՞ք նախատեսվում են այլ միջոցառումներ այս գործողության ներքո: -Այս պահի դրությամբ ոչ:

**ների ներմուծման
ընդհանուր
չափաքանակները
(քվոտաները)**

սահմանելու մասին

Կառավարության թիվ
754 որոշում
(13.05.2021թ.),

- Հիդրոֆտորածխածինների ցանկը
հաստատելու մասին
ՀՀ կառավարության
թիվ 1368-Ն որոշումը
(20 օգոստոսի 2020
թվական),
- Օզոնային շերտը
քայքայող նյութերի և
հիդրոֆտորածխածինների առաքման
թույլտվության
էլեկտրոնային
եղանակով
տրամադրման կարգը
սահմանելու մասին
կառավարության թիվ
1304 որոշումը (12.
08.2021թ.),
- **Օզոնային շերտը
քայքայող նյութերի և
հիդրոֆտորածխածին
ների ներմուծման
անհատական
չափաքանակի
օգտագործման
մասին
հաշվետվության
հաշվառման կարգը**
հաստատելու և ՀՀ
կառավարության
27.12.2007թ. թիվ 1565
որոշման մեջ
փոփոխություն
կատարելու մասին ՀՀ
կառավարության թիվ
1761 որոշում
(28.10.2021 թ.):

6. 125-րդ միջոցառում Կանոնակարգ No 1005/2009 2009 սեպտեմբերի 16 Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում - Օգոնային շերտը քայքայող նյութերի բնագավառում միջոցառումների իրականացման լիազոր մարմին, - Համապատասխան օրենսդրության փոփոխություն և լրամշակում	- «Օգոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի - «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	1. Արդյո՞ք առկա է անհրաժեշտություն վերանայելու լիազոր մարմնի լիազորությունները տվյալ միջոցառման ներքո: - Ոչ: 2. Արդյո՞ք նախորդ կետում ընդունված ենթաօրենսդրական ակտերը ամբողջովին կարգավորում են այս միջոցառմամբ նախատեսված խնդիրները: - Այո
7. 126-րդ միջոցառում Ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ծրագրի մշակում, ինչպես նաև ծրագրից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի լրամշակում, միջոցառումների ծրագրի մշակում		1. Ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման ազգային ծրագրի մշակմանը վերաբերում են 126, 127 և 129 միջոցառումները: Ի՞նչպես է նախատեսվում իրականացնել փուլային կրճատումը: - Ազգային ծրագիրը մշակման փուլում է: Այն հաստատման է ներկայացվելու 2023 թվականի աշնանը Բազմակողմանի հիմնադրամի Գործադիր կոմիտեի 93-րդ նիստին: Նշված նիստում հաստատման արժանանալուց հետո ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացումը նախատեսվում է 2024 թվականից սկսած: 2. Ի՞նչ միջոցառումներ են մեկնարկվել: - Մեկնարկել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 754-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակումը:
8. 127-րդ միջոցառում Կանոնակարգ No 517/2014 Վերականգնման իրականացման	- Ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային	1. Ի՞նչ միջոցառումներ են մեկնարկվել՝ կապված վերապատրաստման և հավաստագրման ներպետական պահանջների սահմանման հետ կապված: - Նախատեսվում է դիմել ԵՄ գործընկերներին՝ կազմակերպելու և

ապահովում՝ համաձայն 8-րդ և 9-րդ հոդվածներով նախատեսված կանոնների: Համապատասխան անձնակազմին և ընկերություններին ներկայացվող՝ վերապատրաստման և հավաստագրման ներպետական պահանջների սահմանում/ համապատասխանեցում (10-րդ հոդված)	ծրագրի մշակում, որի մեջ կներառվի նաև վերոնշյալ հոդվածներով նախատեսված միջոցառումները - Օգտագործված վերահսկվող նյութերի վերականգնման, վերամշակման, կրկնակի օգտագործման և ոչնչացման պարտավորությունները Հայաստանի համար այս փուլում լիովին չեն կիրառվում, քանի որ երկրում վերամշակման և ոչնչացման ոչ մի հնարավորություն չկա:	տեղում ուսումնասիրելու հավաստագրման և վերապատրաստման լավագույն փորձը: 2. Ի՞նչ կարգավորումներ են նախատեսվում վերոհիշյալի հետ կապված: - Հավաստագրման և վերապատրաստման ինստիտուտի նախատեսում և դրա համար իրավական բազայի ստեղծում: Ինչ եղանակով?
9. 128-րդ միջոցառում Կանոնակարգ No 517/2014 (հոդված 12) (հոդվածներ 19 և 20)	- Պիտակավորման համակարգի ստեղծում	1. Արդյո՞ք մեկնարկվել է պիտակավորման համակարգի ստեղծմանը վերաբերող միջոցառումը: - Բազմերի կրճատման ազգային ծրագրի նախագծում դրանք նախատեսված են: Ազգային ծրագիրը մշակման փուլում է: Այն հաստատման է ներկայացվելու 2023 թվականի աշնանը Բազմակողմանի հիմնադրամի Գործադիր կոմիտեի 93-րդ նիստին: Նշված նիստում հաստատման արժանանալուց հետո ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացումը նախատեսվում է 2024 թվականից սկսած: 2. Որքանո՞վ է իրատեսական համակարգի ստեղծման ժամկետը: Արդյո՞ք բավարար են առկա ռեսուրսները: - Ժամկետն իրատեսական չէ և ենթակա է փոփոխության: Ռեսուրսները պարզ կլինեն ազգային ծրագրի հաստատումից հետո:
10. 129-րդ միջոցառում Կանոնակարգ No 517/2014 Կատարման համակարգի ստեղծում (25-րդ հոդված)	- Ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ծրագրի մշակում	1. Ի՞նչ միջոցառումներ են մեկնարկվել: - Ազգային ծրագիրը մշակման փուլում է: Այն հաստատման է ներկայացվելու 2023 թվականի աշնանը Բազմակողմանի հիմնադրամի Գործադիր կոմիտեի 93-րդ նիստին: Նշված նիստում հաստատման արժանանալուց հետո ծրագրում

		ընդգրկված միջոցառումների իրականացումը նախատեսվում է 2024 թվականից սկսած:
11. 130-րդ միջոցառում <i>Հոդված 52, կետ (b), Հոդված 54, կետեր (c) և (d)</i>	- Կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության հայեցակարգի ու ազգային գործողությունների ծրագրի մշակում, 2021թ. - 2023թ. 1-ին եռամսյակում ձեռք է բերվել 11 ավտոմատ օդերևութաբանական կայաններ (տեղադրվելու են Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզերում), գերժամանակակից արբայնակային համակարգ, մշակվում է տվյալների միասնական համակարգ և բջջային հեռախոսի հավելված:	1. Ի՞նչ լրացուցիչ միջոցառումներ են իրականացվելու: - Նախարարությունը պարբերաբար քննարկում է կլիմայի փոփոխությանը դիմակայելու և բացասական հետևանքները մեղմելու գործողությունները, այդ թվում նաև աշխատանքներ են տարվում վարվող քաղաքականությունը բարելավելու, կատարելագործելու ուղղությամբ: հերթական ծրագրերի ընդունման, թե այլ եղանակով? Քանի որ քննարկումներն ընթացքի մեջ են, հետևաբար ներկայումս լրացուցիչ միջոցառումների վերաբերյալ դեռևս հստակ տեղեկատվություն առկա չկա:
12. 131-րդ միջոցառում <i>Հոդված 54, կետ j</i> <i>Օզոնային շերտը վնասող գազերի և ֆտորացված գազերի հետ կապված միջոցառումներ</i> <i>Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1005/2009 կանոնակարգ (ԵՀ)՝ օզոնային շերտը քայքայող նյութերի մասին</i>	Օզոնային շերտը վնասող գազերի և ֆտորացված գազերի հետ կապված միջոցառումներ	1. Ինչպե՞ս է նախատեսվում օզոնային շերտը վնասող նյութերի և գազերի փոխարին կարգավորման իրականացումը: - Օզոնային շերտը վնասող նյութերի մասով իրավակարգավորումները գործում են, մյուս մասով կսկսեն գործել 2024 թ.-ից: 2. Իրականացվելու է արդյո՞ք օզոնային շերտը վնասող գազերի և f-գազերի հետ կապված կարգավորվող օգտագործված նյութերի ոչնչացման իրագործելիության հնարավորությունների գնահատում: Ի՞նչ եղանակով է իրականացվելու գնահատումը: - Շուրջ 3 ամիս առաջ դիմվել է EU for Climate ծրագրին, համատեղ կազմվել է ToR՝ փորձագետ վարձելու և համապատասխան գնահատում իրականացնելու համար, սակայն դեռևս արձագանք չի ստացվել:

Հավելված 4. ճՔ նախատեսված ծրագրերի և ժամկետների հետ կապված հարցեր

ԾՐԱԳՐԵՐ/ԺԱՄԿԵՏՆԵՐ	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
Ճանապարհային քարտեզում սահմանված Twinning ու Taix ծրագրեր	Արդյո՞ք իրականացված և իրականացվելիք Twinning ու Taix ծրագրերը բավարար ե՞ք համարում ԵՄ դիրեկտիվների մոտարկումն արդյունավետ կազմակերպելու համար:	Ենթակա է քննարկման
	Արդյո՞ք միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ է լրացուցիչ ծրագրերի իրականացում (եթե այո, ապա ո՞ր միջոցառումների հետ կապված և կոնկրետ ի՞նչ թեմաներով):	Ենթակա է քննարկման
Ճանապարհային քարտեզում սահմանված միջոցառումների ժամկետ (120-131 միջոցառումներ)	Իրատեսական/բավարար են արդյո՞ք ճանապարհային քարտեզով միջոցառումների համար սահմանված ժամկետները:	Ենթակա է քննարկման
	Առկա են արդյոք միջոցառումներ, որոնց իրականացման համար կան վերապահումներ:	Քննարկման է ենթակա «Համապատասխան կառուցվածքների և ջերմոցային գազերի նույնականացման համակարգի ստեղծում, 2003/87/ԵՀ հրահանգի I և II հավելվածներ, ջերմոցային գազերի (ներառյալ ավիացիոն արտանետումների) դիտանցման, հաշվետվություններ ներկայացնելու, ստուգման և կատարման համակարգերի և հանրային քննարկումների ընթացակարգերի սահմանում» կետի կատարումը:



Funded by the
European Union



Հետազոտության նպատակն է բացահայտել ՀԸԳՀ ճանապարհային քարտեզով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքն ու բացերը: Ամրագրված միջոցառումների կատարման ընթացքի գնահատման հիման վրա կատարվել են ճանապարհային քարտեզի վերանայման առաջարկություններ:

Սույն փաստաթուղթը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է «ԵՄ կլիմայի համար» ՄԱԶԾ-ԵՄ տարածաշրջանային ծրագիրը, և դրանում արտահայտված տեսակետներն ու կարծիքները կարող են չհամընկնել Եվրոպական միության և ՄԱԶԾ տեսակետների հետ: